ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ

10 ՏԱՐԻ Ի ՇԱՀ ԲՈԼՈՐԻ

Հիմնական ցուցանիշներ

2017 թ. հուլիսի 31-ի դրությամբ	Ընդամենը
Ակտիվներ	10 713 մլն ՀՀ դրամ / 22.4 մլն ԱՄՆ դոլար
Վարկային պորտֆել (ներառյալ լիզինգ)	9 304 մլն ՀՀ դրամ / 19.5 մլն ԱՄՆ դոլար
Ընդհանուր կապիտալ	1 397 մլն ՀՀ դրամ / 2.9 մլն ԱՄՆ դոլար
10 տարում տրամադրված վարկերի ծավալ	30000 մլն ՀՀ դրամ / 62.8 մլն ԱՄՆ դոլար
Կոոպերատիվի անդամների քանակ	6400
Միջին վարկի չափ	2.1 մլն ՀՀ դրամ / 4 400 ԱՄՆ դոլար
Վարկավորման ժամկետ	1-7 տարի
Միջին արդյունավետ տոկոսադրույք	13.7 %
Ժամկետանց վարկեր (>0 օր)	0.9 %
ROE	4.4 %
ROA	0.6 %
Գյուղատնտեսության ոլորտի վարկերի մասնաբաժինը	71.5 %
Անձնակազմ	78
Գրասենյակների քանակ	10
Գյուղական վայրում բնակվող հաճախորդների մասնաբաժինը	99 %



Մեր գործընկերները

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն՝

«Երգի-պարի ազգային ակադեմիա», «Հայաստան համահայկական հիմնադրամ», «Գյուղկոոպ» աջակցության հիմնադրամ



ՎԱՐԿԵՐԻ ՔԱՆԱԿ

10
FCA

ԱՐՄԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Գլխավոր գործադիր տնօրեն / Նախագահ



Հարգելի՛ անդամ-փայատերեր,
Ձեզ ենք ներկայացնում Հայաստանում միակ վարկային կոոպերատիվ կառույցի տասնամյա ուղու տարեգրությունը:

Որդեգրելով ԱՄՆ Ֆարմ Կրեդիտ Համակարգի լավագույն փորձը և զարգացնելով այն հայկական իրականության պայմաններում անցած տասը տարիների ընթացքում «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» վարկային կոոպերատիվը կարողացավ կայանալ և իր ուրույն տեղն ունենալ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և փոքր և միջին բիզնեսի վարկավորման ոլորտում:

Հարթ չէին այդ տասը տարիները, սակայն հաղթահարելով խոչընդոտները, մենք դարձանք էլ ավելի ուժեղ, հաստատակամ և նպատակասլաց: Ինչ խոսք, դժվար էր կայանալ և աճել ՀՀ ֆինանսական շուկայում տիրող խիստ մրցակցության պայմաններում, բայց մեր թիմի համախմբված աշխատանքի շնորհիվ այսօր կայացած ենք, ինքնաբավ և ինքնաշխատ:

Երբ ստեղծվում էր «Ֆարմ Կրեդիտ»-ը, շատերն էին թերահավատ: Մեր ծնունդը համընկավ միջազգային ֆինանսական ճգնաժամի հետ, ոչ ոք չէր կարող գուշակել մեր ապագան, բայց մենք կարողացանք հաջողությամբ հաղթահարել մեզ վիճակված ժամանակի փորձությունը:

Մեր կոոպերատիվը ստեղծվել է ֆերմերների կողմից ֆերմերների համար, և նրա հիմնադիրներն առաջնորդվել են «Համագործակցություն ի շահ բոլորի» նշանաբանով՝ ի բարօրություն աշխատող, արարող մարդկանց: Չշեղվելով մեր որդեգրած արժեքներից և տեսլականից՝ շարունակել ենք հետևողականորեն ներդնել կոոպերատիվ վարկավորման սկզբունքները՝ մատուցելով այդ սկզբունքների վրա հիմնված մատչելի վարկային ծառայություններ:

Հարկ ենք համարում նշել Դիտորդ խորհրդի և գործադիր կազմի համագործակցված աշխատանքը կազմակերպության կայացման և կառավարման գործում: Համաձայն մեր կանոնադրության՝ յուրաքանչյուր մարզ Դիտորդ խորհրդում ունի մեկական ընտրված ներկայացուցիչ, ովքեր համատեղ քննարկում են և ընդունում կազմակերպության ռազմավարական որոշումները:

Համատեղ պատկերացնում ենք այն մեծ պատասխանատվությունը, որը տրված է Դիտորդ խորհրդին և գործադիր ղեկավարությանը կազմակերպության ռազմավարական և մարտավարական որոշումների ընդունման գործում: Մենք միասնական թիմով փորձում ենք լուծել պատմության հրամայականով մեզ վիճակված մարտահրավերը՝ կայաց-

նել և զարգացնել Հայաստանի Հանրապետության առաջին և միակ վարկային կոոպերատիվը:

Մենք մեր կառուցվածքով էապես տարբերվում ենք այլ վարկային կազմակերպություններից. անկախ փայամասնակցության չափից բոլոր մասնակիցներն ունեն մեկ ձայնի իրավունք: «Ֆարմ Կրեդիտ»-ը մեր փայատեր անդամների համար միայն վարկատու չէ: Անդամագրվելով կառույցին՝ նրանք դառնում են կառույցի սեփականատեր՝ ամրագրելով իրենց փայամասնակցությունը կոոպերատիվի կապիտալում, ձեռք բերելով կանոնադրությամբ սահմանված բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

Նրանցից յուրաքանչյուրը իր փայամասնակցությամբ նպաստում է մեր երկրի զարգացմանն ու առաջընթացին՝ վարկ ստանալու հնարավորություն ստեղծելով նաև այլ մարդկանց համար: Կարող ենք վստահեցնել, որ փայատերերից ընտրված Դիտորդ խորհուրդը աշխատակազմի հետ համատեղ իր գործունեություններում առաջնորդվում է բացառապես կազմակերպության անդամ-փայատերերի շահերի իրականացմամբ:

Ժամանակին համընթաց «Ֆարմ Կրեդիտ»-ը կարող է դառնալ յուրօրինակ կոոպերատիվ ազգային կառույց՝ վերածվելով ժողովրդական կոոպերատիվ բանկի:

Մեր շնորհակալությունն ենք հայտնում այս տարիների ընթացքում մեզ մշտապես աջակցություն ցուցաբերած բոլոր միջազգային և տեղական գործընկեր-կառույցներին, ՀՀ Կենտրոնական բանկին, Գերմանահայկական հիմնադրամին:

Շնորհակալություն ենք հայտնում կոոպերատիվի անդամ-փայատերերին, մեր աշխատակազմին, Դիտորդ խորհրդի բոլոր անդամներին, առանց որոնց նվիրական ջանքերի հնարավոր չէր լինի հաջողությամբ հատել տասնամյա հետագիծը:

Հարգելի՛ անդամ-փայատերեր,

Այսօր՝ տասը տարի անց, հիշում ենք մեր անցած ուղին և հպարտությամբ փաստում, որ անշրջելի է «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» վարկային կոոպերատիվի առաջընթացը:

Մենք շարունակում ենք վստահ, կայուն և խելամիտ քայլերով առաջ մղել մեր կոոպերատիվը՝ ի շահ գյուղական համայնքների բնակիչների, փոքր ու միջին բիզնեսների սեփականատերերի, ի շահ մեր բոլոր փայատերերի:

Մեր դռները շարունակում են բաց մնալ բոլոր մեր հայրենակիցների համար, ովքեր ամենօրյա քրտնաջան և արդար աշխատանքով նպաստում են մեր երկրի ամրապնդմանը:

ՍԵՐԳՈԺԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Դիտորդ խորհրդի նախագահ

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյան

Կենտրոնական բանկը շնորհավորում է «Ֆարմ Կրեդիտ»-ի գործունեության տասնամյակի կապակցությամբ:

Համաշխարհային տնտեսության զարգացման և տնտեսական ինտեգրացիոն գործընթացների խորացման ներկա պայմաններում կարևորվում է տնտեսության առանձին ոլորտների զարգացման, անհրաժեշտ ճկունության ապահովման, մրցակցային առավելությունների ճիշտ և նպատակային օգտագործման անհրաժեշտությունը: Կենտրոնական բանկը բարձր է գնահատում «Ֆարմ Կրեդիտ» վարկային կոոպերատիվի աշխատանքը, դերն ու նշանակությունը երկրի տնտեսության գերակա ճյուղերից մեկի՝ գյուղատնտեսության բնագավառում:

Կոոպերատիվը մշտապես ապահովել է տնտեսության վարկավորման բարձր աճի տեմպեր՝ զուգահեռ ապահովելով վարկերի բարձր վերադարձելիություն՝ շնորհիվ ոլորտում առկա մարտահրավերներին յուրովի դիմակայելու, գոյություն ունեցող խնդիրները նորարար լուծումներով փոխարինելու: Այս ամենին նպաստել են նաև օտարերկրյա մասնագետների մոտ վերապատրաստում անցած և ժամանակի պահանջներին համապատասխանող անձնակազմը, արևելյան ու արևմտյան համագործակցային մշակույթի, առաջավոր փորձի տեղայնացումը և այնպիսի սկզբունքների որդեգրումը, ինչպիսիք են՝ պրոֆեսիոնալիզմը, թափանցիկությունը, հետևողականությունը և ազնվությունը:

Գնահատելով մարդկային կապիտալի դերը՝ Կենտրոնական բանկը ողջունում է գյուղատնտեսությանն առավել մոտ կանգնած, առկա խնդիրներն ավելի լավ պատկերացնող, հաճախորդների պոտենցիալը բացահայտելուն և առավել նպատակային ու արդյունավետ օգտագործելուն ուղղված «Ֆարմ Կրեդիտ»-ի գործելաոճը՝ հաշվի առնելով այն, որ հենց այդ հաճախորդներն են հանդիսանում վերջինիս անդամ, սեփականատեր, մասնակից և շահառու:

Մենք նաև խրախուսում ենք «Ֆարմ Կրեդիտ»-ի ընդլայնվող համագործակցությունը համայնքային, պետական, օտարերկրյա և միջազգային կառույցների հետ, որը հետագայում նոր լուծումների ու նոր նախագծերի հիմք կարող է դառնալ:

Հաջողություն ենք մաղթում ձեր բոլոր նախաձեռնություններում՝ ևս մեկ անգամ գնահատելով ձեր դերը մեր երկրի գյուղական համայնքների զարգացման, վերջիններիս տնտեսական ու ֆինանսական համահարթեցման, բնակիչների կյանքի որակի բարելավման գործում:

10 ՏԱՐԻ Ի ՇԱՀ ԲՈԼՈՐԻ

2007 2008 2009 2010 2011 2012 2013 2014 2015 2016 2017

2007

2017

1 Մեր կոոպերատիվի պատմությունը ..... էջ 8

2 Մեր մասնաճյուղերը ..... էջ 30

3 Ֆինանսական ցուցանիշներ ..... էջ 34

4 Մեր անդամ-փայատերերը ..... էջ 38

5 Ուղերձներ ..... էջ 52

Ֆարմ Կրեդիտ Արմենիայի հիմնական արժեքներն են

- Ազնվություն
- Հարգանք
- Հետևողականություն
- Հաճախորդի կարևորում
- Թիմային աշխատանք
- Պատշաճություն
- Բարձր կատարողականություն
- Պրոֆեսիոնալիզմ
- Թափանցիկություն

2007 • 2008 • 2009 • 2010 • 2011 • 2012 • 2013 • 2014 • 2015 • 2016 • 2017

- **Փետրվարի 21-22-ը կազմակերպության հիմնադիր ժողովի անցկացում հանրապետության հինգ մարզերից 57 անդամների մասնակցությամբ**
- **Սեպտեմբերի 18-ին ՀՀ Կենտրոնական բանկում գրանցում որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն, առևտրային կոոպերատիվ**
- **Դեկտեմբերի 11-ին առաջին վարկերի տրամադրման հանդիսավոր արարողություն**

2007թ-ին ամերիկյան «Ֆարմ Կրեդիտ Համակարգ»-ի մոդելով, ԱՄՆ Գյուղդեպարտամենտի ֆինանսական և տեխնիկական աջակցությամբ և 57 հայ ֆերմերների նախաձեռնությամբ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» վարկային կոոպերատիվը սկսում է իր գործունեությունը՝ ուղղված մեկ ընդհանուր գաղափարի իրականացմանը, այն է՝ բարելավել Հայաստանում գյուղաբնակ ձեռներեցների տնտեսությունները՝ տրամադրելով մատչելի և հասանելի վարկային միջոցներ: Ֆինանսական ճգնաժամի և անբավարար միջոցների պայմաններում փորձելով հաստատել կոոպերատիվ կառույցի մոդելը Հայաստանում՝ «Ֆարմ Կրեդիտն» առաջ է քայլում, և նույն թվականի փետրվարին գումարվում է կազմակերպության հիմնադիր ժողովը, որի ընթացքում հաստատվում է կազմակերպության կանոնադրությունը, ընտրվում են «Ֆարմ Կրեդիտ»-ի Դիտորդ խորհրդի անդամները, խորհրդի նախագահը և գործադիր մարմինը:

Ամիսներ անց՝ սեպտեմբերի 18-ին, «Ֆարմ Կրեդիտ»-ը պաշտոնապես գրանցվում է նաև ՀՀ Կենտրոնական բանկում որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն, առևտրային կոոպերատիվ, որին հաջորդում են ԱՄՆ «Ֆարմ Կրեդիտ Համակարգ»-ի բանկերի ներկայացուցիչների այցելությունները Հայաստան և «Ֆարմ Կրեդիտ»-ի ինքնահաստատումը որպես վարկային կոոպերատիվ:

2007թ. դեկտեմբերին **11**-ին «Ֆարմ Կրեդիտ»-ի երևանյան գրասենյակում առաջին աշխատակիցները հանդիսավոր արարողությամբ տրամադրեցին առաջին 3 վարկերը՝ դրանով իսկ սկիզբ դնելով մի ազգանվեր գործի, որն այսօր բոլորում է արդեն իր տասնամյա տարեդարձը:

2007

2017

Մեր կոոպերատիվի պատմությունը

2007• **2008** • 2009 • 2010 • 2011 • 2012 • 2013 • 2014 • 2015 • 2016 • 2017

- **Ապրիլի 9 –ին «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի և «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի միջև համագործակցության պայմանագրի կնքում «Ջրից դեպի շուկա» վարկային բաղադրիչի շրջանակներում**
- **Ամերիկյան պատվիրակությունների այցելությունները Հայաստան՝ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի գրասենյակ**

2008թ. «Ֆարմ Կրեդիտ»-ի պատմության մեջ նշանավորվեց «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի հետ համագործակցության հաստատմամբ, ինչի արդյունքում մենք ՀՄՀ-Հայաստան ծրագրի «Ջրից դեպի շուկա» վարկային բաղադրիչի շրջանակներում հնարավորություն ստացանք գյուղացիական տնտեսություններին ցուցաբերելու տեխնիկական օժանդակություն գիտելիքների և նոր տեխնոլոգիաների փոխանցման միջոցով, ինչպես նաև մատչելի վարկային միջոցներ տրամադրելու ծրագրի շահառուներին:

Տարին նշանավորվեց ԱՄՆ «Ֆարմ Կրեդիտ Համակարգ»-ի մեր գործընկեր-հովանավորների այցելություններով, որոնք իրենց աջակցությամբ մշտապես խթանել են մեր վարկային կոոպերատիվի զարգացումը: Նրանց շարքում էին «Ֆարմ Կրեդիտ Ադմինիստրացիա»-ի գլխավոր գործադիր տնօրեն/նախագահ Նենսի Փելլեթը, «Ֆարմ Կրեդիտ Վիրջինիաս» կոոպերատիվ բանկի գլխավոր գործադիր տնօրեն Դեիվ Լոուրենսը, նույն բանկի խորհրդի նախագահ Ջոն Ուելսը: Ամերիկյան մեր բարեկամների շարքում անհնար է չառանձնացնել 2008-2011թթ. Երևանում ԱՄՆ դեսպան Մարի Յովանովիչին և ԱՄՆ Գյուղդեպարտամենտի Արտաքին գյուղատնտեսական ծառայությունների ներկայացուցիչ Ֆրեդ Ջոնսթոնին, ովքեր բազմիցս աջակցել են «Ֆարմ Կրեդիտ»-ին կայացման մարտահրավերներով լի ճանապարհին:

2007• 2008 • **2009** • 2010 • 2011 • 2012 • 2013 • 2014 • 2015 • 2016 • 2017

- «Ֆարմ Կրեդիտ»-ը՝ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի «Ջրից դեպի շուկա» ծրագրի լավագույն մասնակից
- Ապրիլի 30-ին պայմանագրի ստորագրում «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի հետ
- ԱՄՆ-Հայաստան փոխադարձ այցեր

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ն հայաստանյան այն եզակի կառույցներից է, որոնք շահագրգիռ են իրենց աշխատակիցների կրթամակարդակի բարձրացման և ուսուցման համար: 2009թ. ապրիլի 27-ից մայիսի 1-ը «Ֆարմ Կրեդիտ»-ի մի շարք աշխատակիցներ մասնակցեցին Վաշինգտոնում «Microfin» ծրագրի դասընթացին, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի մի շարք ղեկավար աշխատակիցների հետ այցելություններ կատարեցին ԱՄՆ «Ֆարմ Կրեդիտ Ադմինիստրացիա», ԱՄՆ Գյուղդեպարտամենտի գրասենյակ, «Միդատլանտիկ Ֆարմ Կրեդիտ» և «Վիրջինիայի Ֆարմ Կրեդիտ» բանկեր՝ ծանոթանալով ամերիկյան կոոպերատիվ բանկային մշակույթին:

2009թ. ձեռքբերումներից էր նաև «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի հետ համագործակցության շարունակությունը: Հունվարին «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ն ճանաչվեց «Ջրից դեպի շուկա» ծրագրի լավագույն մասնակից, ապա արդեն ապրիլի 30-ին կազմակերպությունների միջև ստորագրվեց պայմանագիր, համաձայն որի «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ն պետք է իրականացներ «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի վարկային բաղադրիչը և վարկեր տրամադրեր գյուղաբնակ շահառուներին՝ գյուղատնտեսական արտադրությունը ընդլայնելու և արդյունավետ տեխնոլոգիաներ կիրառելու նպատակով:

FCA
FARM CREDIT ARMENIA

2007• 2008 • 2009 • **2010** • 2011 • 2012 • 2013 • 2014 • 2015 • 2016 • 2017

- **Ապրիլի 22-ին տրակտորների դաշտային ցուցահանդես Արարատի մարզի Դիմիտրով համայնքում, համագործակցության սկիզբ չինական «YTO» ընկերության հետ, փոխըմբռնման հուշագրի ստորագրում**
- **Պայմանագրի ստորագրման արարողություն «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի և ՀՀ Կենտրոնական բանկի միջև՝ Համաշխարհային բանկի «ՓՄՁ ֆինանսական հասանելիության» վարկային ծրագրի շրջանակներում**

2010թ.-ը կարևորվեց մեր պատմության մեջ նաև չինական «YTO» ընկերության հետ համագործակցության հաստատմամբ, ինչի արդյունքում մենք կարողացանք մեր հաճախորդների համար 2010-2011թթ.-ին կազմակերպել տրակտորների դաշտային ցուցահանդեսներ, ծանոթացնել գյուղտեխնիկային և տրամադրել այդ ընկերության շուրջ **100** միավոր տրակտորներ և գյուղատնտեսական տեխնիկա լիզինգային պայմաններով:

«Ֆարմ Կրեդիտ»-ի պատմության ամենախոշոր ձեռքբերումներից էր 2010թ.-ի սեպտեմբերին ՀՀ Կենտրոնական բանկի հետ Համաշխարհային բանկի «ՓՄՁ ֆինանսական հասանելիության» վարկային ծրագրի շրջանակներում պայմանագրի կնքումը, որի շնորհիվ «Ֆարմ Կրեդիտ»-ը դարձավ Հայաստանի առաջին վարկային կոոպերատիվը, որն առևտրային բանկերին զուգահեռ հնարավորություն ստացավ վարկեր տրամադրել իր հաճախորդներին ծրագրի շրջանակներում:

2007• 2008 • 2009 • 2010 • **2011** • 2012 • 2013 • 2014 • 2015 • 2016 • 2017

- **Համագործակցության պայմանագիր «Հայ-բելառուսական առևտրի կենտրոն»-ի հետ**
- **«Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի և «PUM»-ի միջև փոխըմբռնման համաձայնագրի կնքում**

«Ֆարմ Կրեդիտ»-ի և «Ար-ԲԵ հայ-բելառուսական առևտրի կենտրոն»-ի միջև համագործակցության պայմանագիրը ևս կարևոր ձեռքբերում էր մեզ համար կոոպերատիվի լիզինգային գործարքների շրջանակներում: Այս համագործակցության շնորհիվ «Ֆարմ Կրեդիտ»-ը հնարավորություն ընձեռեց մեր անդամ-փայատերերին չինական «YTO» տրակտորներին և գյուղգործիքներին զուգահեռ ձեռք բերել նաև բելառուսական արտադրության տրակտորներ և այլ գյուղտեխնիկա:

Իսկ նիդեռլանդական «PUM» կազմակերպության հետ համագործակցության հաստատումը հնարավորություն տվեց հետագա տարիների ընթացքում կազմակերպության փորձագետների կողմից դասընթացներ անցկացնել ոչ միայն «Ֆարմ Կրեդիտ»-ի աշխատակազմի, այլ նաև մեր անդամ-փայատերերի համար՝ նրանց հուզող թեմաների վերաբերյալ:

9850
SL

2007• 2008 • 2009 • 2010 • 2011 • **2012** • 2013 • 2014 • 2015 • 2016 • 2017

- **Անդամակցություն «Միկրոֆինանսավորման կենտրոն»-ին**
- **Հոկտեմբերին մասնակցություն Կոոպերատիվների միջազգային գագաթնաժողովին Կանադայի Քվեբեք քաղաքում: Անդամակցություն «Կոոպերատիվների Միջազգային Դաշինք»-ին**
- **Համաձայնագրի կնքում «ԳՖԿ-ԾԻԳ»-ի հետ**

2012թ.-ին «Ֆարմ Կրեդիտ»-ը հանդիսավոր տոնեց իր 5-ամյա տարեդարձը, որը նշանավորվեց տարվա ընթացքում մի շարք նոր հաջողություններով. կառույցն անդամակցեց երկու խոշոր ֆինանսական կազմակերպությունների՝ «Միկրոֆինանսավորման կենտրոն»-ին (MFC) և «Կոոպերատիվների Միջազգային Դաշինք»-ին (ICA):

Հանդիսավոր արարողությամբ նշվեց նաև խորհրդանշական 1000-րդ անդամ-փայատիրոջ անդամակցությունը կոոպերատիվին:

Այնուհետև, հոկտեմբեր ամսին պայմանագիր կնքվեց «Գյուղական ֆինանսավորման Կառույց-Ծրագրերի իրականացման գրասենյակ»-ի (ԳՖԿ-ԾԻԳ) հետ «Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ»-ի (ԳԶՄՀ-IFAD) գյուղատնտեսության վարկավորման պրոդուկտի շրջանակներում:

ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ
FARM CREDIT ARMENIA
FCA

2007• 2008 • 2009 • 2010 • 2011 • 2012 • **2013** • 2014 • 2015 • 2016 • 2017

- **Համագործակցության պայմանագրի ստորագրում «Դրիմ-Գարդեն» ՍՊԸ-ի հետ**
- **Անդամակցություն «Եվրոպայի Կոոպերատիվների Միության»-ը**

Մայիսի 6-7-ը Թուրքիայի Ստամբուլ քաղաքում «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի գործադիր տնօրեն Արմեն Գաբրիելյանը մասնակցեց «Եվրոպայի Կոոպերատիվների Միության» ընդհանուր ժողովին, որի ընթացքում «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» վարկային կոոպերատիվը հաստատվեց որպես միության անդամ դրանով իսկ սկիզբ դնելով նոր համագործակցությունների հնարավորությունների:

Ողջ տարվա ընթացքում շարունակվեցին նաև արտերկրյա մասնագետների դասընթացները աշխատակազմի համար: 2013թ-ի հունվարի 13-15-ը, ապա նաև մարտի 11-13-ը մենք հյուրընկալեցինք ԱՄՆ-ից ժամանած դասընթացավարների, ովքեր խորհրդի անդամների և ղեկավար անձնակազմի համար կազմակերպեցին սեմինարներ: Դասընթացները վարում էին «Տեխասի A&M» համալսարանի դասախոս Ջոն Փենսոնը և «Opportunity International» միջազգային ընկերության ռիսկերի կառավարման գլխավոր մասնագետ Լին Էքստոնը: Նորագույն մեթոդներով անցկացվող դասընթացների հիմնական թեմաներն էին կոոպերատիվի կառավարումը և ռիսկերի կառավարման հիմնախնդիրները:

2007• 2008 • 2009 • 2010 • 2011 • 2012 • 2013 • **2014** • 2015 • 2016 • 2017

- **Համագործակցություն «ՄոբիԴրամ» ՓԲԸ-ի հետ**
- **Համագործակցության պայմանագիր «Գերմանահայկական հիմնադրամ»-ի հետ**
- **Համագործակցության մեկնարկ «Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամ»-ի հետ (EFSE)**
- **Համագործակցության պայմանագրի կնքում «Ասիական զարգացման բանկ»-ի հետ**
- **Փոխըմբռնման հուշագրի կնքում «Միջազգային համագործակցության գերմանական խնայբանկերի հիմնադրամ»-ի հետ**
- **Մասնակցություն Ռուսաստանի վարկային միությունների լիգայի համաժողովին Սոչիում**

2014թ.-ին ևս երեք կարևոր համագործակցությունների հաստատումը էականորեն մեծացրեց «Ֆարմ Կրեդիտ»-ի անդամ-փայատերերի վարկավորման հնարավորությունները:

«ՄոբիԴրամ» ՓԲԸ-ի հետ համագործակցության շնորհիվ «Ֆարմ Կրեդիտը» առավել բարելավված ծառայություններ սկսեց տրամադրել իր անդամ-փայատերերին՝ հնարավորություն ընձեռելով ստանալ և կատարել վարկերի մարումներ «Մոբի Դրամ»-ի գրասենյակում:

2014թ-ի մարտին «Ֆարմ Կրեդիտը» շարունակեց համագործակցությունը «Գերմանահայկական հիմնադրամ»-ի հետ և դարձավ գերմանական «KFW զարգացման բանկ»-ի ագրովարկավորման ծրագրի մասնակից՝ այդպիսով ընդլայնելով ագրովարկավորման բնագավառում իր տրամադրած ծառայությունները: Իսկ ահա սեպտեմբերի 3-ին «Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման» ծրագրի շրջանակներում «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ-ի և «Ասիական զարգացման բանկ»-ի միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի շրջանակներում վարկեր են տրամադրվում ՀՀ-ում կանանց ձեռներեցության և կանանց միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման խթանման նպատակով:

2007• 2008 • 2009 • 2010 • 2011 • 2012 • 2013 • 2014 • **2015** • 2016 • 2017

- **Մասնակցություն Գերմանիայի Մոնտաբուր քաղաքում «Գերմանական Կոոպերատիվների Ակադեմիա»-ի (ԳԿԱ) կողմից հատուկ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի թիմի համար կազմակերպված դասընթացներին: Համագործակցության հուշագրի կնքում կազմակերպությունների միջև**
- **Հոկտեմբեր ամսին «Խելամիտ վարկավորում» արշավի երկրորդ փուլի անցկացում**
- **Մասնակցություն «Միկրոֆինանսավորման կենտրոն»-ի 18-րդ ամենամյա կոնֆերանսին Պրահայում**

2015թ-ին Պրահայում անցկացվող «Միկրոֆինանսավորման կենտրոն»-ի ամենամյա կոնֆերանսին «Ֆարմ Կրեդիտ»-ի գործադիր տնօրեն Արմեն Գաբրիելյանն ընտրվեց ՄՖԿ խորհրդի անդամ:

Դեռ 2014թ.-ից ի վեր «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» վարկային կոոպերատիվը «Միկրոֆինանսավորման կենտրոն»-ի հովանու ներքո իրականացնում է «Խելամիտ վարկավորում» կրթական արշավը ներկա և պոտենցիալ հաճախորդների համար: «Խելամիտ վարկավորում» արշավը ներառում է մի շարք հարցեր, որոնց պատասխանը յուրաքանչյուր հաճախորդ պետք է իմանա նախքան վարկ վերցնելը:

Արշավն իրականացվում է արդեն երրորդ տարին անընդմեջ: Հոկտեմբերի 1-ից 31-ը հաճախորդների համար կազմակերպվում են ինտերակտիվ սեմինար-քննարկումներ կազմակերպության մարզային մասնաճյուղերում և գյուղական համայնքներում և տրամադրվում են համապատասխան տեղեկատվական նյութեր:

GLOBAL
CONFERENCE
AND GENERAL ASSEMBLY

2007• 2008 • 2009 • 2010 • 2011 • 2012 • 2013 • 2014 • 2015 • **2016** • 2017

- **Փետրվարի 4-ին ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Մ. Միլսի այցը «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի գրասենյակ**
- **Սեպտեմբերի 29-ին «ՀՀ գյուղատնտեսության ոլորտի աջակցման երկրորդ փուլ» ծրագրի շրջանակներում այծի կաթի և պանրի արտադրության արժեշղթայի ֆինանսավորման մասին համագործակցության համաձայնագրի ստորագրում «Գոլդեն Գոութ» ՓԲԸ-ի հետ**
- **Նոյեմբերին գործնական այցելություն Ալբանիայի «Ֆեդ Ինվեստ» (FedInvest) գյուղատնտեսական ֆինանսական կոոպերատիվ և «Նոա» (Noah) վարկային կազմակերպություն**

2016թ-ի սեպտեմբերին «Ֆարմ Կրեդիտը» ապրանքային արժեշղթայի ֆինանսավորման նպատակով գործարկեց «Առատ կաթ» նոր վարկատեսակը, որը նախատեսված է «Գոլդեն Գոութ» ընկերությանը և վերջինիս մատակարար հանդիսացող ֆերմերներին հատուկ պայմաններով վարկեր տրամադրելու համար: «Առատ կաթ» վարկատեսակի պայմանները մշակվել են հաշվի առնելով անասնապահության ոլորտի և կաթ արտադրողների եկամուտների ստացման առանձնահատկությունները:

Նշանակալից էր նաև համանման գործունեություն ծավալող ալբանական «Ֆեդ Ինվեստ» (FedInvest) գյուղատնտեսական ֆինանսական կոոպերատիվի հետ փորձի փոխանակման նպատակով նոյեմբեր ամսին «Ֆարմ Կրեդիտ»-ի աշխատանքային խմբի այցը մայրաքաղաք Տիրանա: Կոոպերատիվների աշխատակիցները հնարավորություն ունեցան քննարկելու կոոպերատիվ ֆինանսական կառույցի առաջխաղացման սեփական փորձը՝ հատուկ ուշադրություն հատկացնելով տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով բիզնես գործընթացների ավտոմատացման և մասնաճյուղային ցանցի արդյունավետ զարգացմանը վերաբերող հարցերին:

2016թ. հոկտեմբերի 13-ին Կոոպերատիվների միջազգային գագաթնաժողովի շրջանակներում տեղի ունեցավ «CIBP» միջազգային կառույցի գործադիր կոմիտեի նիստը, որի պատվավոր հյուրը և մասնակիցն էր «Ֆարմ Կրեդիտ»-ի գլխավոր գործադիր տնօրեն/նախագահ Արմեն Գաբրիելյանը: Վերջինս նիստի մասնակիցներին ներկայացրեց «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ն՝ խոսելով կոոպերատիվի հիմնադրման, զարգացման և առաջիկա ծրագրերի մասին:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

2007• 2008 • 2009 • 2010 • 2011 • 2012 • 2013 • 2014 • 2015 • 2016 • **2017**

- **Փետրվարին «ԳՏՏՁ ԾԻԳ»-ի Գյուղական ֆինանսավորման կառույցի հետ համագործակցության շրջանակներում այգեգործական վարկային պրոդուկտի տրամադրում առկա այգիների տեխնոլոգիական արդիականացման և նոր այգիների հիմնման համար**
- **Հունիսի 14-ին Փարիզում տեխնիկական աջակցության համաձայնագրի ստորագրում «Ֆրանսիայի խնայողական բանկերի ազգային ֆեդերացիա»-ի հետ**
- **Հոբելյանական 10-րդ՝ «Մյասնիկյան» գրասենյակի բացում**

Այս տարվա նշանակալից ձեռքբերումներից մեկը հունիսի 14-ին Փարիզում «Ֆրանսիական խնայողական բանկերի ազգային ֆեդերացիա»-ի (Federation Nationale des Caisses d'Epargne) հետ տեխնիկական աջակցության համաձայնագրի ստորագրումն էր: Այս պայմանագիրը նպատակ ունի նպաստելու «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի աշխատակիցների կրթամակարդակի և հմտությունների զարգացմանը, ինչպես նաև եվրոպական կոոպերատիվ մշակույթի լավագույն փորձի կիրառմանը:

Արարողությանն իրենց հարգարժան ներկայությամբ պատվել էին Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Վիգեն Չիտեչյանը և դեսպանորդ Լևոն Ամիրջանյանը: «FNCE»-ի նախագահ Ժան Արոնդելը հավաստիացրեց, որ սա սկիզբ է հետագա երկկողմ արդյունավետ համագործակցության և բարեկամության:

Այս տարի «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի 10-ամյակին ընդառաջ բացվեց մեր հոբելյանական 10-րդ գրասենյակը Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղում: Սա «Ֆարմ Կրեդիտ»-ի առաջին մասնաճյուղն է գյուղական համայնքում և հնարավորություն է ընձեռում մեր մասնագետներին ավելի մոտ գտնվել իրենց անդամ-փայատերերին:





10 ԳՐԱՍԵՆՅԱԿ
10 ՏԱՐՈՒՄ

Գլխամաս	2007
Արմավիր	2011
Մասիս	2012
Վայոց ձոր	2013
Էջմիածին	2013
Կոտայք	2013
Արտաշատ	2014
Սիսիան	2015
Աշտարակ	2017
Մյասնիկյան	2017

2

Հավատարիմ մնալով իր առաքելությանը, այն է՝ մոտ գտնվել գյուղական համայնքներին և այնտեղ բնակվող իր անդամ-փայատերերին՝ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ն իր հիմնադրումից ի վեր իրականացրել է մասնաճյուղերի ընդլայնման հստակ մարտավարություն: Տարեցտարի նոր մասնաճյուղեր բացելով հանրապետության մարզերում՝ այսօր արդեն, իր տասնամյա տարեդարձին ընդառաջ, «Ֆարմ Կրեդիտը» հասել է 10-ը տարում 10-ը գրասենյակ խորհրդանշական արդյունքին:

Շարունակական այս մարտավարության շնորհիվ «Ֆարմ Կրեդիտ»-ի վարկային և լիզինգային ծառայություններն ավելի հասանելի են հաճախորդներին:

Նոր մասնաճյուղերի բացումը նպաստում է կազմակերպության հետագա զարգացմանը և նոր հաճախորդների ներգրավմանը, ինչպես նաև խթանում է գյուղատնտեսության աճը:

Վայոց ձոր

600 Անդամ-փայատեր

2007
2017

Բացվել է 2013 թ հունվարին

Սպասարկվող ոլորտներից ավելի շատ գերակշռում են անասնապահությունը, պտղաբուծությունը և այգագործությունը

Էջմիածին

1300 Անդամ-փայատեր

2007
2017

Բացվել է 2013 թ հունվարին

Սպասարկվող ոլորտներից ավելի շատ գերակշռում են ջերմոցային տնտեսությունները և բաց գրունտային մշակություն իրականացնող տնտեսությունները

Կոտայք

620 Անդամ-փայատեր

2007
2017

Բացվել է 2013 թ նոյեմբերին

Սպասարկվող ոլորտներից ավելի շատ գերակշռում են մանր և խոշոր եղջերավոր անասնապահությունը, այգեգործությունը,

Արտաշատ

1050 Անդամ-փայատեր

2007
2017

Բացվել է 2014 թ ապրիլին

Սպասարկվող ոլորտներից ավելի շատ գերակշռում են այգեգործությունը, անասնապահությունը, ջերմոցային տնտեսությունները, դաշտավարությունը, սառնարանային տնտեսությունները



Իր մասնաճյուղերի անձնակազմի աշխատանքը խրախուսելու և գնահատելու նպատակով «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ն իրականացնում է ամենամյա մրցանակաբաշխություն 5 անվանակարգերում, որոնցից 2-ը մասնաճյուղային մակարդակով են, 3-ը՝ անհատական:

Մրցանակաբաշխության արդյունքների ամփոփման համար հիմք են ընդունվում այն չափանիշները, որոնք առավելագույնս ընդգծում են կատարված աշխատանքի որակն ու արդյունավետությունը:

2015թ.-ի մրցանակաբաշխության մրցանակակիրներն են.

- Արմավիր մասնաճյուղ - «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՐԱԿ ԱՊԱՀՈՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ»
- Արտաշատ մասնաճյուղ - «ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԱԾ ԱՊԱՀՈՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ»
- Արտակ Բադալյան - «ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿԻ ՎԱՐԿԵՐ ՏՐԱՄԱԴՐԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԵՏ»
- Արտակ Բադալյան - «ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԾԱՎԱԼԻ ՎԱՐԿԵՐ»
- Հայկ Համբարձումյան - «ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՐԱԿ»

3

Ֆինանսական ցուցանիշներ, գրաֆիկներ

Վարկային պորտֆել և ֆինանսական արդյունքներ

Իր ստեղծման հիմքում կազմակերպությունը նպատակ է ունեցել զարգացնել գյուղատնտեսական արտադրությունը և բարելավել կյանքի որակը գյուղական շրջաններում կայուն կոոպերատիվ կառույցի միջոցով: Ի սկզբանե որոշված էր, որ գործունեության հիմնական ուղղությունը լինելու է գյուղատնտեսության վարկավորումը և այդ ոլորտում կոոպերատիվ սկզբունքների վրա հիմնված մատչելի ֆինանսական ծառայությունների մատուցումը:

Կազմակերպությունը իրականացնում է գյուղատնտեսությամբ զբաղվող և գյուղատնտեսական մթերքի վերամշակում իրականացնող, ինչպես նաև այլ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկավորում և գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգ: Կազմակերպության վարկային պորտֆելում կարելի է առանձնացնել 5 հիմնական պրոդուկտներ՝ գյուղատնտեսական վարկեր, ագրոբիզնեսի վարկեր, ՓՄՁ վարկեր, լիզինգ և բնակարանի վերանորոգման վարկեր:

Գյուղատնտեսական վարկեր տրամադրվում են մարզերում գյուղատնտեսությամբ (անասնաբուծություն, ձկնաբուծություն, խաղողագործություն, այգեգործություն, այլ գյուղատնտեսական գործունեություն) զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց: Վարկային պորտֆելի գերակշիռ մասը կազմում են գյուղատնտեսական վարկերը: Քանակային առումով այս ցուցանիշը կազմում է պորտֆելի երեք չորրորդից ավելին:

Ագրոբիզնեսի վարկեր տրամադրվում են մարզերում գյուղատնտեսական մթերքի վերամշակմամբ և իրացմամբ (կաթի արտադրություն և վերամշակում, գինեգործություն, չոր մրգերի և բանջարեղենի արտադրություն, թունաքիմիկատների և բուժանյութերի վաճառք, ագրոբիզնեսի այլ գործունեություն) զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց, ովքեր ունեն փորձ այդ ոլորտում:

ՓՄՁ վարկեր տրամադրվում են մարզերում մանրածախ և մեծածախ առևտրով, արտադրությամբ, ծառայությունների մատուցմամբ, ինչպես նաև այլ գործունեությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց, ովքեր ունեն փորձ այդ ոլորտում: ՓՄՁ վարկերը կազմում են վարկային պորտֆելի ավելի քան մեկ քառորդը:



Լիզինգի ծառայությունից կարող են օգտվել գյուղատնտեսության, ագրոբիզնեսի և այլ ոլորտների ֆիզիկական և իրավաբանական անձինք: Կոոպերատիվը տասը տարիների ընթացքում տրամադրել է ավելի քան 130 միավոր գյուղատնտեսական տեխնիկա (տարբեր ծիաուժի տրակտորներ և գյուղատնտեսական գործիքներ):

Բնակարանի / բնակելի տան վերանորոգման վարկեր ստանալու համար կարող են դիմել կոոպերատիվի անդամ-փայատեր ֆիզիկական անձինք, որոնք բնակվում են ՀՀ գյուղական վայրերում և ունեն կայուն աշխատավարձ կամ այլ աղբյուրներից (գյուղատնտեսությունից, ձեռնարկատիրական գործունեությունից, բիզնեսում մասնակցությունից, վարձակալությունից և այլն) կանոնավոր եկամուտներ:

«Ֆարմ Կրեդիտ»-ը տարիների ընթացքում գրանցել է դինամիկ աճ բոլոր ցուցանիշների գծով: Սակայն աճի տեմպը համընկնում է երկրում տնտեսական աճի տեմպին՝ տնտեսական ստագնացիայի դեպքում ցուցաբերելով ավելի պահպանողական վարքագիծ: Կազմակերպության ակտիվները 2017 թվականի հուլիսի 31-ի դրությամբ կազմում են 10.7 մլրդ ՀՀ դրամ (22.4 միլիոն ԱՄՆ դոլար[1]): Ակտիվների 92%-ը վարկային պորտֆելն է, 6%-ը՝ դրամական միջոցները և բանկային ավանդները:

Նախորդ տասը տարիների ընթացքում տրամադրվել է շուրջ 13,400 վարկ մոտ 30 մլրդ ՀՀ դրամի չափով (62.8 միլիոն ԱՄՆ դոլար[1]):

Վարկային պորտֆելի դինամիկ աճի շնորհիվ պորտֆելը 2017 թվականի հուլիսի 31-ի դրությամբ կազմում է 9.3 մլրդ ՀՀ դրամ (19.5 միլիոն ԱՄՆ դոլար[1])՝ կազմելով ակտիվների 92%-ը:

Վարկային պորտֆելի միջին ժամկետայնությունը կազմում է 20 ամիս, միջին վարկի մեծությունը 2.1 մլն ՀՀ դրամ (4,400 ԱՄՆ դոլար[1]), իսկ միջին կշռված եկամտաբերությունը կազմում է 13.7%: Կազմակերպության ներգրաված պարտավորությունները կազմում են 9.18 մլրդ ՀՀ դրամ (19.2 միլիոն ԱՄՆ դոլար[1])՝ կազմելով պասիվների 86 %-ը:

«Ֆարմ Կրեդիտ»-ը Ֆինանսների նախարարության «Գյուղական ֆինանսավորման կառույց» ԾԿԳ-ի միջոցով մասնակցում է «Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամի» Ջրից դեպի շուկա վարկային կոմպոնենտի և «Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ»-ի (IFAD)-ի վարկային ծրագրերին, իսկ Գերմանահայկական հիմնադրամի միջոցով՝ Համաշխարհային բանկի ՓՄԶ ֆինանսական հասանելիության վարկային ծրագրին, գերմանական KfW զարգացման բանկի ագրովարկավորման, ինչպես նաև Ասիական Զարգացման Բանկի կանանց ձեռներեցության վարկային ծրագրերին: 2016 թվականից իրականացվում է վարկավորում Գյուղական ֆինանսավորման կառույց ԾԿԳ-ի Գյուղական կարողությունների ստեղծման ծրագրի շրջանակներում՝ տրամադրելով երկարաժամկետ և մատչելի վարկեր այգիների ստեղծման և արդիականացման համար:

Կազմակերպության կապիտալը 2017 թվականի հուլիսի 31-ի դրությամբ կազմում է մոտ 1.4 մլրդ ՀՀ դրամ (2.9 միլիոն ԱՄՆ դոլար[1]), որից 842.6 մլն ՀՀ դրամը (1.75 միլիոն ԱՄՆ դոլար[1]) բաժին է ընկնում կանոնադրական կապիտալին, իսկ 554.7 մլն ՀՀ դրամը (1.16 միլիոն ԱՄՆ դոլար[1])՝ չբաշխված շահույթին:



Վարկային ռիսկերի զսպման և կառավարման տեսանկյունից լուրջ ուշադրություն է դարձվում վարկային պորտֆելի կառուցվածքի դիվերսիֆիկացմանը (ըստ հաճախորդի, ըստ ճյուղի, ըստ ժամկետի), իրականացվում են պարբերական մշտադիտարկումներ: Կարևորվում է նաև միջին վարկի ցուցանիշը, ինչը կշռում է համեմատաբար խոշոր և փոքր տնտեսությունների վարկավորման հարաբերակցությունը պորտֆելում:

Կոոպերատիվի անդամ-փայատերերի քանակը 2017 թվականի վերջին կազմել է 6400 անդամ:



478.36 դրամ = 1 դոլար 31.07.17

Հենրիկ Եվրեյան

գ. Հովտաշատ

Ձկնաբուծություն

Հենրիկ Եվրեյանը «Ֆարմ Կրեդիտ»-ի այն բազում անդամ-փայատերերից է, ովքեր իրենց գործունեությունը սկսել և զարգացել են «Ֆարմ Կրեդիտ»-ի հետ:

Հենրիկ Եվրեյանը Հայաստանում ձկնաբուծությամբ զբաղվող խոշորագույն տնտեսվարողներից է: Նրա ձկնալճերի ընդհանուր ծավալը ներկայումս կազմում է շուրջ 4 հեկտար, որտեղ աճեցվում է հիմնականում իշխան ձկնատեսակը: Եվրեյանների տնտեսությունը ընտանեկան և սերնդեսերունդ փոխանցվող աշխատանքի վառ օրինակ է: Այստեղ աշխատում են երեք եղբայրները և իրենց հայրը՝ Դերենիկ Եվրեյանը, որն էլ հիմնադրել է տնտեսությունը. տարիներ առաջ՝ 1971թ.-ին, հաստատվելով Հովտաշատ գյուղում (Մասիսի տարածաշրջանի ամենամեծ գյուղն է, գյուղմթերքի շուկայի առաջատարներից)՝ նա սկսել է զբաղվել հողագործությամբ, տարբեր մշակաբույսերի և պտղատու ծառերի աճեցմամբ: Այնուհետև, որդիներին ներգրավելով, 2007թ.-ին կառուցել է առաջին ձկնալիճը, և աստիճանաբար Եվրեյան ընտանիքը մեծացրել է և ծաղկեցրել բազմաճյուղ տնտեսությունը. այսօր իրենց 12 հեկտար հողատարածքով (մշակում են ձմերուկ, ծիրան, պղպեղ և այլն) և 4 հեկտար տարածությամբ ձկնալճերով նրանք համարվում են «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի խոշորագույն անդամ-փայատերերից: «Ամենածանր տարիները ինձ համար պատանեկության տարիներն էին, երբ ես գերազանցությամբ սովորում էի 8-րդ դասարանում, սակայն ստիպված եղա ամբողջությամբ ժամանակս և ուժերս տրամադրել մեր նորաստեղծ տնտեսությանը», - ասում է Դերենիկ Եվրեյանը:

Հենրիկ Եվրեյանը մեզ պատմեց ծիածանափայլ իշխանի աճեցման առանձնահատկությունները. արտասահմանից ներկրվում է ձկնկիթը, որը հատուկ պայմաններում ապրում է առանձին ձկնալճերում, այնուհետև մեծանալով տեղափոխվում է հիմնական լճեր, որտեղ օրական 3 անգամ կերակրվում է հատուկ կերերով 1 տարի և 2 ամիս և արդեն պատրաստ է լինում վաճառքի: Հիմնականում վաճառքի համար պատրաստ ձկները կշռում են 1կգ, սակայն առանձին դեպքերում աճեցվում են տարբեր քաշի ձկներ, ընդհուպ մինչև 1.7կգ: Ձկնալճերը ողջ տարվա ընթացքում հատուկ վերահսկողության տակ են աշխատակիցների կողմից, ովքեր պարբերաբար մաքրում են դրանք տիղմից և հետևում են ճիշտ ջերմաստիճանի պահպանմանը (14°-ը համարվում է իդեալական):

Հենրիկ Եվրեյանը «Ֆարմ Կրեդիտ»-ի անդամ-փայատեր է դարձել ձկնալճերը կառուցելուց մոտ երկու տարի անց, երբ տնտեսությունը զարգացնելու համար անհրաժեշտ եղավ ներգրավել նոր ֆինանսական միջոցներ: Եվրեյան եղբայրները նշում են, որ շնորհիվ «Ֆարմ Կրեդիտ»-ի իրենք կարողացել են արագ քայլերով զարգացնել տնտեսությունը և այնպես կազմակերպել այն, որ հասնեն հաջողության: Ի պատասխան «Ֆարմ Կրեդիտ»-ի աջակցության՝ նրանք հպարտորեն փաստում են, որ այս տարիների ընթացքում մշտապես ժամանակին և պարտաճանաչությամբ են կատարել մարումները, և ցանկացած նոր գործ ձեռնարկելիս գիտեն, որ կա մի կառույց, որին իրենք կարող են կրկին ու կրկին ապավինել «սեփական տան նման»:

«Յանկացած նոր գործ ձեռնարկելիս գիտեմ, որ կա մի կառույց, որին կրկին ու կրկին կարող եմ դիմել սեզիալական տան համար...»

Խաչիկ Մարտիրոսյան
Աննա Մարտիրոսյան (դուստրը)
«Գոլդեն Գոութ» ՓԲԸ, ք. Եղեգնաձոր

Պանրի արտադրություն

«Գոլդեն Գոութ» ՓԲԸ-ն Վայոց ձորի տարածաշրջանում պանրագործության խոշորագույն ձեռնարկատերն է: Կազմակերպությունը հիմնադրվել է 2000թ.-ին, «Ֆարմ Կրեդիտ»-ի անդամ-փայատեր է 2009թ.-ից: Սկզբում այն տեղակայված էր Գողթանիկ գյուղում, ապա ընդլայնվելով՝ արտադրամասը տեղափոխվել է Եղեգնաձոր քաղաք: Պանրի արտադրությանը զուգահեռ ընկերությունը նաև զբաղվում է խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ. ունի մոտ 850 գլուխ մանր եղջերավոր, 13 գլուխ խոշոր եղջերավոր անասուն և 130 գլուխ խոզ:

«Գոլդեն Գոութ»-ի արտադրամասում օրական 7տոննա կաթ է մթերվում, որը հավաքվում է սեփական և հարակից գյուղերի փոքր անասնապահական տնտեսություններից: Կաթն անցնում է հատուկ մշակման գործընթացներ, պաստերիզացվում է, ապա նոր անցնում արտադրական փուլ: Միջին հաշվարկով 7լ կաթից ստացվում է 1կգ պանիր, ինչն իր հերթին պայմանավորված է տարեշրջանով և կաթի յուղայնությամբ: Արտադրական հաջորդ փուլը պանրի հասունացման փուլն է, որը տևում է 2 ամսից ավել (կախված պանրատեսակից): Եվ ահա արդեն այս փուլից հետո պանիրը փաթեթավորվում է և ուղարկվում վաճառքի: «Գոլդեն Գոութ»-ի գործարանը քրտնաջանորեն աշխատում է ամեն օր, կոորդինացնելով իրենց աշխատանքն այնպես, որ անգամ ձմռանը, երբ կաթ չի մթերվում, արտադրամասը շարունակում է ակտիվ աշխատանքները պահեստում՝ պանրի փաթեթավորմամբ և վաճառքի իրականացմամբ:

«Գոլդեն Գոութ»-ի արտադրանքի 61%-ն արտահանվում է, իսկ մնացած 39%-ը՝ սպառվում տեղական շուկայում: Արտադրանքի տեսակային բավականին բազմազան է. ներառում է այնպիսի պանրատեսակներ, ինչպիսիք են Լոռի, Չանախ, Ձոր, Գլաձոր, Եղեգնաձոր, Ալպիական, Տոմմի և այլն:

«Գոլդեն Գոութ»-ի և «Ֆարմ Կրեդիտ»-ի 8-ամյա համագործակցությունն այսօր երկուստեք հաջողությունների է հասցրել: «Գոլդեն Գոութ» ՓԲԸ-ի շուրջ ձևավորված արժեքային շղթայի մասնակիցներին, մասնավորապես՝ կաթի մատակարարներին և «Գոլդեն Գոութ» ՓԲԸ-ին, «Ֆարմ Կրեդիտ» վարկային կոոպերատիվը մշակել և տրամադրում է հատուկ վարկատեսակ՝ «Առատ Կաթ», որը տրամադրվում է ծրագրի մասնակիցներին շրջանառու և հիմնական միջոցների ձեռքբերման համար:

«Սա ուղղակի կազմակերպություն չէ. մենք մեր հույսը դնում ենք Փարմ Կրեդիտի վրա և իրենք էլ մեզ վրա, քանի որ մեկս մյուսին ղեռ շատ ենք օգնելու...»

Ռոլանդ Սուսունյան
գ. Նարեկ

Այգեգործություն, բանջարաբոստանային մշակաբույսերի մշակություն

Ռոլանդ Սուսունյանը «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի առաջին անդամ-փայատերերից է: Անդամագրվել է 2007թ.-ից և արդեն վարկավորվել 8 անգամ: Զբաղվում է այգեգործությամբ և բանջարաբոստանային մշակաբույսերի մշակությամբ: «Ֆարմ Կրեդիտ»-ի հետ իր համագործակցության սկիզբը վերհիշելիս Ռոլանդը պատմում է.

«Հայրս դեռ «Ակբա» բանկից ճանաչում էր «Ֆարմ Կրեդիտի» ղեկավարին, ուստի թիմի հանդեպ վստահությունը կարելի է ասել հորից ժառանգաբար փոխանցվել է ինձ: Հիշում եմ առաջին վարկս, որի համար դիմեցի, 10մլն դրամ էր կազմում: Այլ բանկերից մերժումներ էի ստացել, ուստի դիմեցի «Ֆարմ Կրեդիտ»-ին. դժվար էր, քանի որ չունեի սեփական գույք, որպեսզի գրավ դնեմ և ստանամ անհրաժեշտ գումարը: Ստիպված եղա քեռուս ընկերոջ գույքը գրավադնել, և դժվարությամբ, սակայն հաջողվեց «Ջրից դեպի շուկա» ծրագրի շրջանակներում «Ֆարմ Կրեդիտ»-ի միջոցով ստանալ անհրաժեշտ 10 մլն դրամը:

Վարկը ստանալուց հետո անմիջապես գործի անցա. գնեցի գյուղտեխնիկա, սկսեցի ինտենսիվ մշակել հողը, ավելացրինք մեր այգիները: Իհարկե դժվար էր այդ ժամանակ, քանի որ միայն 100.000 դրամ ամսական տոկոսագումար էի վճարում, սակայն կարողացա հաջողության հասնել և երկու տարում մարեցի վարկս...»

Սկզբում Ռոլանդ Սուսունյանը հիմնականում զբաղվում էր լոլիկի մշակությամբ, այնուհետև նորանոր պտղատու ծառեր տնկեց և ընդլայնեց տնտեսությունը, ինչի արդյունքում կարողացավ մի քանի տարում հանել քեռու ընկերոջ գրավադրված գույքը: Ռոլանդը հպարտությամբ նշում է. «Շուտով կարողացա սեփական տուն և նոր հողեր գնել և արդեն միայն իմ սեփական գույքն էի գրավադնում»:

Այժմ Ռոլանդ Սուսունյանի տնտեսությունն ընդգրկում է շուրջ 7 հեկտար հողատարածք, որտեղ նա զբաղվում է սալորի, դեղձի, խնձորի, կեռասի, տանձի, ծիրանի և խաղողի մշակությամբ: Բերքի մեծ մասն իրացվում է տեղում վերավաճառող անհատների միջոցով, մյուս մասը պահվում է հատուկ սառնարանային խցիկներում ավելի ուշ թանկ վաճառելու նպատակով: «Ֆարմ Կրեդիտ»-ից ստացած վերջին վարկով նա նաև վերանորոգել և ընդլայնել է իր սառնարանային տնտեսությունը ավելի մեծ քանակությամբ բերք պահելու համար: Այգիների մշակությունը ևս իրականացվում է սեփական տրակտորներով, որոնք ձեռք է բերել «Ֆարմ Կրեդիտ»-ի ֆինանսավորմամբ: Բացի այդ Ռոլանդ Սուսունյանը զբաղվում է տնկիների աճեցմամբ և վաճառքով. տարեկան պատվաստում է մոտ 7000 տնկանյութ, որից վաճառվում է նվազագույնը 5000 հատը:

Բարեկամների գույքը գրավադնելուց հասնելով մինչև սեփական անշարժ գույքի և գյուղտեխնիկայի ձեռքբերմանը, 1 սառնարանից հասնելով 8-ի, փոքր հողակտորից աճելով մինչև 7 հեկտար՝ Ռոլանդ Սուսունյանը «Ֆարմ Կրեդիտ»-ի հետ անցել է տասնամյա երկար ու դժվարին ճանապարհ, սակայն այսօր արդեն հանգիստ խղճով և վստահ նեցուկ ունենալով կարողանում է ավելի մեծ ու լուրջ քայլեր կատարել:

«Սկզբում խնդիրս միայն գրավներն էին. այժմ արդեն դա խոչընդոտ չէ ինձ համար: Իմ վարկային գիծն ավելի մեծ ֆինանսական միջոցների հնարավորություն է տալիս, քան ես վերցնում եմ, սակայն առկա ֆինանսատնտեսական անկայունության պայմաններում չեմ ուզում մեծ ռիսկի դիմել: Նույն խորհուրդը ստանում եմ նաև «Ֆարմ Կրեդիտ»-ի մեր աշխատակիցներից, որոնք իրապես մտածում են մեր մասին. «Ֆարմ Կրեդիտ»-ում ինձ լիովին ընտանիքի անդամի պես են վերաբերվում: Հիշում եմ 2007-2008թթ. վարկերը ստանում էինք հենց գլխամասից՝ «Ֆարմ Կրեդիտ»-ի «առաջին դեմքերից». սակայն ամենակարևորն այն է, որ այսօր էլ մեր մասնաճյուղի աշխատակիցները պահպանել ու շարունակում են նույն արժեքներն ու վերաբերմունքը, ինչն ի սկզբանե ստանում էինք իրենց ղեկավարներից»:

«Հայրս Փարմ Կրեդիտի համախոռդս էր, ուստի կառույցի ղեկավարի և նրա թիմի համոզեպ ունեցած վստահությունը հորիցս ժառանգաբար փոխանցվել է ինձ...»

Տիգրան Մարկոսյան
գ. Սիսավան

Այգեգործություն

Տիգրան Մարկոսյանը «Ֆարմ Կրեդիտ»-ի հետ անցել է բավականին երկար ճանապարհ դեռ 2007թ.-ից: «Հիշում եմ մեր համագործակցության սկիզբը. «Ֆարմ Կրեդիտ»-ից հյուրեր եկան մեր համայնք, զրուցեցինք, աշխատակիցները ներկայացրին իրենց կառույցի սկզբունքներն ու նպատակները և բավականին հետաքրքրեցին մեզ իրենց գաղափարներով: Մասնակցեցի հիմնադիր ժողովին, ապա արդեն 2008թ.-ին ստացա առաջին վարկը»: Այսպես Տիգրան Մարկոսյանը դարձավ այն առաջին 57 անդամ-փայատերերից մեկը, որոնց այսօր «Ֆարմ Կրեդիտ»-ի պատմության մեջ հիշում են որպես հիմնադիր խիզախ գյուղատնտեսներ, ովքեր հավատացին և ստեղծեցին այն կառույցը, որին հպարտորեն անդամագրում են մինչ օրս:

Տիգրան Մարկոսյանի առաջին վարկը խաղողի այգի հիմնելու համար էր: Այդ ժամանակ Տիգրանն ուներ ընդամենը 1 հեկտար հողատարածք և մեկ «Ժիգուլի»: Առաջին ձեռնարկը պսակվեց հաջողությամբ, և աստիճանաբար Մարկոսյանը գնեց նորանոր հողեր և գյուղտեխնիկա: Այսօր Տիգրան Մարկոսյանի տնտեսությունը «Ֆարմ Կրեդիտ»-ի խոշորագույն ներդրումներից է իր ընդարձակ ծիրանի և այլ պտղատու ծառերի այգիներով, հացահատիկի և արևածաղկի դաշտերով:

Այն հարցին, թե ինչու է այսքան տարի հավատարիմ «Ֆարմ Կրեդիտ»-ին, Տիգրան Մարկոսյանը պատասխանում է. «Առաջին հերթին դա պարտավորեցնող է, քանի որ սա մեր կառույցն է, մեր «բանկը», և ուզում ենք մերը զարգացնել: Ճիշտ է, ունենք նաև վարկեր այլ ֆինանսական կառույցներից, սակայն Ֆարմում մենք միշտ ստանում ենք առանձնահատուկ վերաբերմունք և փոխարենը ցուցաբերում ենք պատասխանատվություն՝ ժամանակին կատարելու մարումները»,-ժպիտով նշում է Տիգրան Մարկոսյանը:

Տիգրան Մարկոսյանն ունի բազմաճյուղ տնտեսություն, որի աշխատանքները ղեկավարում է եղբոր՝ Վարդան Մարկոսյանի հետ, զբաղվում են հացահատիկային և բանջարաբոստանային մշակաբույսերի, արևածաղկի, խաղողի, դեղձի, ծիրանի մշակությամբ: Արտադրանքը հիմնականում իրացնում են հայկական շուկայում, Հայաստանի մի շարք խոշոր մթերող կազմակերպությունների մատակարարներից են: Նաև աշխատում են արտահանող կազմակերպությունների և անհատ-վերավաճառողների հետ, քանի որ իրենք եղբոր հետ ամբողջովին չեն հասցնում իրացնել բերքը: Ձմռան 3-4 ամիսներին եղբայրները հիմնականում հանգստանում են, իսկ արդեն գարնանից սկսում են նորանոր ներդրումներ անել:

Ուրախալի է նաև այն փաստը, որ մեր անդամ-փայատերերը մտերմաբար համագործակցում են նաև մեկը մյուսի հետ, ինչպես օրինակ Տիգրան Մարկոսյանն ու Ռոլանդ Սուսունյանը: Վերջինիցս Մարկոսյանը պարբերաբար գնում է տնկիներ իր այգիներն ընդլայնելու նպատակով:

Իր սեփական վարկային կոոպերատիվի օգնությամբ Տիգրան Մարկոսյանը, սկսելով 1 հեկտար հողատարածքից, այսօր հասել է 50-ի, որտեղ կարողացել է հուսալի և կայուն տնտեսություն կազմակերպել:

«Քարե Գրաֆիտի առաջին աշխատողները կարծես բանակիս ընկերները լինեն, այնքան հին ու մտերիմ եմք...»

Վարուժան Մուրադյան
«Վան Արդի» ՍՊԸ, գ. Սասունիկ

Գինեգործություն

Վարուժան Մուրադյանն այն հայրենասերներից է, ովքեր արտասահմանում երկար տարիներ ապրելով և ծավալելով որոշակի գործունեություն, ի վերջո վերադարձել են հայրենիք՝ հարազատ հողի վրա փորձելու ստեղծագործել և բարիք ստանալ:

Արտասահմանում աշխատել է ֆինանսական ոլորտում, սակայն գրասենյակային աշխատանքն աստիճանաբար դադարեց հետաքրքիր լինել պարոն Մուրադյանին, և ցանկանալով ստեղծագործ աշխատանք կատարել՝ նա որոշեց հիմնադրել այս գինեգործարանը: 2008թ.-ին գնեց հողատարածք, տնկեց առաջին այգիները, «Ֆարմ Կրեդիտ»-ից ստացված դրամական միջոցներով Ֆրանսիայից և Իտալիայից ձեռք բերեց անհրաժեշտ սարքավորումները, հնեցման տարաները, ուսումնասիրեց գինու պատմությունը, ինչպես ինքն է նշում «գինու մեղուն իրենց կծեց» և անցավ գործի: Տակառները, որոնցում պահվում է գինին, բերված են Լեռնային Ղարաբաղից և Ֆրանսիայից: Բացի սեփական խաղողի այգիներից մթերում է նաև տարածաշրջանի այլ այգեգործների բերքը: Վան Արդի անունը բառացիորեն նշանակում է «Վանի արև». անվանումը պայմանավորված է նրանով, որ պարոն Մուրադյանն ունի վանեցու արմատներ և իր ապրանքանիշի անվան միջոցով փորձել է փոխանցել իր պապենական հողերի արևն ու աշխատանքի ջերմությունը, որն այսօր ներդնում է գինեգործարանի ողջ արտադրական գործընթացի մեջ:

Վարուժան Մուրադյանը միշտ նշում է, որ ցանկանում է գինի արտադրել ոչ թե պարզապես վաճառելու համար, այլ այն դարձնելու ընտանեկան մշակույթ և փոխանցելու սերնդեսերունդ: Այժմ Վան Արդի գինիներն իրենց ուրույն տեղն ունեն տեղի և արտասահմանյան շուկայում: Դրանք լիիրավ կերպով մասնակցում են մի շարք մրցույթների տարբեր երկրներում և մրցանակներ շահում իրենց համային բարձր որակի շնորհիվ:

«Արտերկրում և Հայաստանում մի շարք վարկատուների հետ եմ աշխատել, սակայն միշտ զգացել եմ, որ յուրաքանչյուրն իր շահն է հետապնդում, իսկ «Ֆարմ Կրեդիտ»-ի դեպքում այլ է. ես այստեղ աշխատանքի հիմքում զգում եմ մարդկային հարաբերությունների արժեքները: «Ֆարմ Կրեդիտ»-ի բոլոր աշխատողները մարդկային առանձնահատուկ կերպար ունեն և իրենց պատրաստակամությամբ միշտ մեր կողքին են: «Ֆարմ Կրեդիտ»-ին դիմելիս հանգիստ ենք այնպես, ինչպես պարտքով գումար կուզեիր հարազատ քեռուցդ»:

Պարոն Մուրադյանի և «Ֆարմ Կրեդիտ»-ի համագործակցությունը դեռ երիտասարդ է՝ ընդամենը 2 տարեկան, սակայն «Ֆարմ Կրեդիտ»-ի աջակցությամբ տնկված և մշակված այգիներն ու գինեգործարանը այսօր իրենց բարիքներով վկայում են, որ այս համագործակցությունը տանում է դեպի համատեղ բարգավաճման, ինչը և ընկած է մեր վարկային կոոպերատիվի սկզբունքային հիմքում:

«Քարմ Կրեդիտը fn փոխարեն գնահատում է գործարարի ռիսկերը, ճիշտ ուղղություն ու խորհուրդ տալիս քեզ...»

Արտավազդ Խաչատրյան

գ. Առատաշեն



Ջերմոցային տնտեսություն

Արտավազդ Խաչատրյանը «Ֆարմ Կրեդիտ»-ի Դիտորդ խորհրդի անդամներից է, զբաղվում է ջերմոցային տնտեսությամբ: Ունի 5000քմ ապակեպատ ջերմոց, որտեղ մշակում է լոլիկ՝ որպես առաջին բերք, և վարունգ ու լոլիկ՝ որպես երկրորդ բերք: Այս տնտեսությունում միանգամից զգում ես, որ գործ ունես հմուտ, բանիմաց բանջարաբույծ-մասնագետի հետ, ում աչքից ոչինչ չի վրիպել: Չորս տասնամյակ առաջ ավարտել է Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտի մեխանիզացիայի ֆակուլտետը, աշխատանքի անցել Էջմիածնի տարածաշրջանում գտնվող Մերձավանի խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության հայկական գիտահետազոտական ինստիտուտում, 1980 թ.-ից տեխնիկական գիտությունների թեկնածու է, հետաքրքրությունների շրջանակում է եղել թեք լանջերին խաղողի տնկման մեքենայի ստեղծումը: Այնուհետև համագործակցություն է հաստատել «Հայ օգնության ֆոնդ»-ի հետ և հիմնել իր ջերմոցային տնտեսությունը:

«Մեծածավալ շինմոնտաժային աշխատանքներ են արվել, կոնստրուկցիաների մեծ մասը գնել եմ նախկին ջերմոցատերերից, շատերը հիասթափված էին, ասում էին անապագա, անհուսալի գործ ու զբաղմունք է: Ամենը իմ ձեռքերով եմ գլուխ բերել: Գերխնդիրը ինձ համար եղել է հուսալի, կահավորված ջերմատան կառուցումը և դանդաղ, բայց վստահ քայլերով հասել եմ նպատակիս. առաջին արդյունքները ստացել եմ 2006 թվականին»,- նշում է պարոն Խաչատրյանը:

Ջերմոցը տարին երկու անգամ խոշոր ծավալներով բերք է տալիս, իսկ տարվա մնացած մասը հիմնականում զբաղվում են մշակությամբ, ներդրումներ են կատարում, որպեսզի հետագայում վայելեն արդյունքները:

«Ֆարմ Կրեդիտ»-ի հետ համագործակցության արդյունքում պարոն Խաչատրյանը կարողացել է վստահ քայլերով առաջ տանել իր տնտեսությունը, ընդլայնել մշակության ծավալները, գնել ծածկոցի ավտոմատ համակարգ ջերմոցի համար և դեռ շարունակում է նորանոր հաջողությունների հասնել՝ օրինակ ծառայելով մեր կոոպերատիվի մյուս անդամների համար:

«Արդեն չորրորդ տարին է համագործակցում եմ «Ֆարմ Կրեդիտ Արմենիայի» հետ: Այստեղ հաճախորդին վարկային մասնագետները հիմնովին բացատրում են վարկավորման կարգը, որոշում նրա վարկունակության մակարդակը, գնահատում ռիսկերը, տոկոսագումարների մարումը համապատասխանեցնում դրամական հոսքերի ժամանակացույցին: Վարկառուն իրեն պաշտպանված է զգում, որովհետև նա դառնում է նաև փայատեր, կոոպերատիվի անդամ: Այս կառույցում ես թիմային համերաշխ աշխատանք եմ տեսնում և զգում, որ ղեկավարության կողմից արվող բոլոր քայլերը մի նպատակ են հետապնդում՝ մշակել և տրամադրել վարկային մատչելի միջոցներ»:



«Այս կառույցում ես թիմային համերաշխ աշխատանք եմ տեսնում և զգում, որ ղեկավարության կողմից արվող բոլոր քայլերը մի նպատակ են հետապնդում՝ մշակել և տրամադրել վարկային մասշտաբի միջոցներ»:

Արտաշես Ռոստոմյան
Ռաֆիկ Թադևոսյան

Մարկ Ագրո ՍՊԸ, Սավ Ագրո, գ. Գեղանիստ

Ջերմոցային տնտեսություն

Տնտեսության հիմնական ճյուղը ջերմոցային կուլտուրաների մշակությունն է, մասնավորապես՝ վարունգ և լոլիկ: Զբաղվում է նաև բուժանյութերի և պարարտանյութերի առևտրով: Ինչպես «Ֆարմ Կրեդիտ»-ի հաջողակ անդամ-փայատերերի մեծ մասը, ռիսկերը նվազեցնելու նպատակով այստեղ ևս զուգահեռ զարգացնում են տնտեսության այլ ճյուղեր՝ պտղաբուծություն, այգեգործություն և այլն:

Շուրջ 1 հեկտար տարածությամբ այս տնտեսության բնականոն աշխատանքային գործընթացներն ամեն օր կոորդինացնում և ղեկավարում է անդամ-փայատիրոջ աները՝ Ռաֆիկ Թադևոսյանը: Նա պատմում է բերքի մշակման և ստացման հիմնական ընթացակարգը. վարունգի սերմերը տնկվում են փետրվարի վերջին, ապա շարունակական մշակման և աշխատանքների արդյունքում հնարավոր է դառնում գարնան կեսից հավաքել բերքը՝ օրական 1-1.5 տոննա վարունգ: «Բերքահավաքի ժամանակ մեզ օգնում են շուրջ 10 աշխատակիցներ: Ստացված բերքը հիմնականում իրացնում ենք տեղի շուկայում, սակայն փորձում ենք արտահանել նաև արտասահմանյան շուկա», - ասում է Ռաֆիկ Թադևոսյանը:

Այս ջերմոցը մյուսներից առանձնանում է ջեռուցման իր ինքնատիպ մեթոդներով, որոնք հենց սեփականատերերն են մշակել և ներդրել: Ջեռուցումն իրականացվում է գոմաղբից և բուժանյութերից հատուկ մշակված գլանակավոր խառնուրդների այրման միջոցով, որոնցից ստացված ջերմությունը հատուկ խողովակներով տարածվում է ողջ ջերմոցով մեկ:

Այն հարցին, թե, որոնք են իրենց տնտեսության մեջ առաջացող ռիսկերը և խնդիրները, Ռաֆիկ Թադևոսյանը պատասխանում է. «Կարկուտը, ցրտահարությունը, շուկայի խնդիրները և իրացման ընթացքում առաջացող դժվարությունները. բայց բոլորն էլ փորձում ենք հաղթահարել մեր կազմակերպված աշխատանքի շնորհիվ»:

Այս տնտեսությունը մեկն է այն բազում հաջողակներից, ովքեր «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի հետ անցել են իրենց զարգացման ուղին և այժմ քաղում են այդ համագործակցության արդյունքները: Սա նաև ապացույց է, որ հայ գյուղացին կոոպերատիվ համագործակցության շնորհիվ անկոտրում կարող է հաղթահարել զանազան խոչընդոտներ և փոքր ու վստահ քայլերով առաջ շարժվել, ինչպես անում է պարոն Ռաֆիկը՝ ջերմոցով քայլելիս նվագելով իր ակորդեոնը, համեմելով դժվարին գործը ուրախ և հուզիչ մեղեդիներով:



«Դժվարություններ ունենում եմ, բայց բոլորն էլ փորձում եմ հաղթահարել մեր կազմակերպված աշխատանքի շնորհիվ»

ԴՈՒԳԼԱՍ Լ. «ԴԱԳ» ՖԼՈՐԻ

Հարգելի՛ ընկերներ,

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի տասներորդ տարելիցի տոնակատարությանը մասնակցելը բարձր պատիվ է ինձ համար: Մեծագույն ուրախությամբ եմ տոնելու Հայաստանի գյուղական համայնքների հզորացման գաղափարին ուղղված ձեր գործունեության տասնամյակը և ցավում եմ, որ այլևս չեմ կարող բնակվել Հայաստանում և աշխատել ձեզ հետ:

2005թ-ին, երբ «Ֆարմ Կրեդիտ Ադմինիստրացիա»-ի նախագահ Նենսի Փելլեթը խնդրեց ինձ ղեկավարել ֆերմերների վարկավորման համակարգի հիմնադրման նախաձեռնությունը Հայաստանում, ես ստիպված եղա փնտրել Հայաստանն աշխարհի քարտեզի վրա: Միակ հիշատակումը, որ լսել էի Հայաստանի մասին, մայրիկիս խոսքերն էին. «Կե՛ր այն ամենը, ինչ կա ափսեումդ. դու պետք է հիշես սովյալ հայերի մասին»: Դա 1940-ականներն էին, երբ ես փոքր տղա էի և գաղափար չունեի, թե ովքեր են հայերը, որտեղ են նրանք ապրում և ինչու են նրանք սովյալ:

2005թ-ից ի վեր ես շատ բան եմ իմացել Հայաստանի, նրա գտնվելու վայրի, ժողովրդի, պայքարի և մարդկության պատմության մեջ ունեցած ներդրման մասին: Ես սովորեցի սիրել Հայաստանն ու նրա ժողովրդին, և շատ ցավում եմ, որ այլևս չեմ կարող ապրել ձեզ հետ:

2005թ. մի խումբ առաջադեմ հայեր մի քանի անգամ այցելեցին ԱՄՆ՝ ուսումնասիրելու ամերիկյան ֆերմերների վարկավորման մեր կոոպերատիվ համակարգը և պարզելու, թե արդյոք ԱՄՆ Գյուղդեպարտամենտը կաջակցի իրենց երկրում նման համակարգ ստեղծելու հարցում: 2006թ. հունվարին Ռոլանդ Սմիթը, Բոբ Օրրիկը և ես մեկնեցինք Հայաստան՝ տեղում գնահատում կատարելու համար: Երկու շաբաթվա ընթացքում մենք հանդիպումներ ունեցանք ֆերմերների հետ, որոնք ձյան մեջ մեծ տարածություններ էին անցնում ոտքով՝ մեզ հանդիպելու և մեր հարցերին պատասխանելու համար: Մենք հանդիպումներ ունեցանք նաև կառավարության պաշտոնյաների հետ, մեր դեսպանատան և ԱՄՆ ՄԶԳ-ի ներկայացուցիչների, Կենտրոնական բանկի պաշտոնյաների, ՀԿ-ների, համալսարանի դասախոսների, բանկիրների, ունիվերսալ վարկային բանկերի ներկայացուցիչների և Հայաստանի գյուղական համայնքներում վարկավորում իրականացնող այլ անձանց հետ: Տուն վերադառնալուց հետո Ռոլանդը, Բոբը և ես ավարտեցինք մեր ուսումնասիրությունը և տեղեկացրինք ԱՄՆ Գյուղդեպարտամենտին, որ Հայաստանում հնարավոր է ստեղծել այդ համակարգը, և Հայաստանի Կենտրոնական բանկը հեշտությամբ կարող է կանոնակարգել այն:

Հայաստանից ժամանած աշխատանքային խումբը համակարգի համար ցանկանում էր օգտագործել կոոպերատիվի մոդելը, և, իհարկե, Ռոլանդը, Բոբն ու ես ոգեշնչված էինք այդ հնարավորությամբ: Մենք իմացանք, որ նախկին խորհրդային երկրում կոոպերատիվ համակարգ ստեղծելն ու գործադրելը հսկա մարտահրավեր էր: Խորհրդային Միությունը անհատներից վերցրել էր գյուղատնտեսական հողը, սարքավորումները և անասուններին կոլտնտեսական տնտեսություններ ստեղծելու նպատակով: Խորհրդային Միությունն այդ կոլտնտեսական տնտեսությունները «կոոպերատիվներ» էր անվանում, ուստի մեծ աշխատանք ու բացատրություններ պահանջվեցին՝ հայ գյուղացիներին հավաստիացնելու համար, որ կոոպերատիվի այս մեկ այլ տեսակը նրանց համար ավելի շահավետ կլինի:

Հաղթահարելով բոլոր դժվարին մարտահրավերները՝ Արմեն Գաբրիելյանը և վճռական տնօրենների խորհուրդը, ղեկավարները և աշխատակիցները մեծ ջանքեր գործադրեցին, որպեսզի «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ն դառնա ներկայիս կայացած ընկերությունը: Արմենն անսպառ լավատեսությամբ հսկայական աշխատանք է կատարել, ինչի շնորհիվ մեծ հաջողությունների է հասցրել Հայաստանի գյուղական վայրերին ծառայող միակ կոոպերատիվ ֆինանսական կառույցը: Առանձնահատուկ պետք է նշեմ նաև ԱՄՆ կառավարությանը և այն բազմաթիվ միջազգային ֆինանսական կառույցներին, որոնք «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ին տրամադրել են ֆինանսական միջոցներ, կապիտալ և աջակցություն:

Պատմական Արարատ լեռան գագաթից հնչեցնում եմ իմ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐՆ ու ԳՈՎԱՍԱՆՔԸ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ին՝ տասը տարիների ընթացքում Հայաստանի գյուղական համայնքներին և ժողովրդին հաջողությամբ աջակցելու համար:

Հարգանքով, մեծ սիրով և հիացմունքով,

Դուգլաս Լ. Ֆլորի
Ֆերմեր
«Farmer Mac» ընկերության Խորհրդի անդամ
«Ֆարմ Կրեդիտ Ադմինիստրացիա»-ի Խորհրդի նախկին անդամ
«Farm Credit System Insurance Corporation» ընկերության Խորհրդի նախկին անդամ և նախագահ

Douglas L. Flory

Լին Էքսթոն և Ջոն Փենսոն

Նախկինում՝ 2010-2015թթ., «Տեխասի A&M համալսարան»-ի գյուղատնտեսության տնտեսագիտության ավագ պրոֆեսոր դոկտոր Ջոն Փենսոնը և «Exton & Partners Risk, Governance and Analytics» ՍՊԸ-ի Գլխավոր գործընկեր տկն. Լին Էքսթոնը աշխատել են որպես «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի խորհրդի և ավագ ղեկավարների խորհրդատու՝ կարողությունների զարգացման խորհրդատվական ծրագրի շրջանակներում: Թիմը գործում էր ԱՄՆ Գյուղդեպարտամենտի արտաքին գյուղատնտեսական ծառայության (ԱՄՆ ԳԴ ԱԳԾ) հետ կնքված պայմանագրի համաձայն՝ որպես Հայաստանի գյուղական համայնքներում վարկային միջոցների հասանելիության խթանման ծրագրի մաս: 2007-2015թթ. այս ծրագրի ներքո «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ընկերությանը գործնական աջակցություն և կապիտալ տրամադրվեց:

ԱՄՆ ԳԴ ԱԳԾ-ի դերը «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի կարողությունների զարգացմանն աջակցելու գործում երեք ձևով էր դրսևորվում.

1. Ֆինանսական ներդրում, 2. Վերլուծական ներդրում, 3. Կրթական ներդրում

Էքսթոնը և Փենսոնը հիմնականում աշխատել են ծրագրի կրթական բաղադրիչի գծով, մասնավորապես՝ անցկացրել են կորպորատիվ կառավարման և ռիսկերի կառավարման դասընթաց «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի խորհրդի անդամների համար և հանդես են եկել որպես տեխնիկական հարցերով խորհրդատուներ ավագ ղեկավարների համար: Ծրագրի նպատակն էր ստեղծել հզոր կառավարման համակարգ, որը կնպաստեր «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի՝ ֆինանսապես ինքնաբավ լինելու նպատակի իրագործմանը և կզիներ նրան կորպորատիվ կառավարման հմտություններով՝ զուգակցված համաշխարհային լավագույն փորձի հետ:

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի գործունեության 10-ամյակի կապակցությամբ ցանկանում ենք շնորհավորել Արմեն Գաբրիելյանին, խորհրդի անդամներին և ավագ ղեկավարներին, որովհետև կարծում ենք, որ կազմակերպությունը լիովին հասել է իր նպատակին: Ցավում ենք, որ չենք կարող անձամբ ձեզ հետ լինել այս կարևոր իրադարձության ընթացքում, սակայն ուրախ կլինենք հետագայում նույնպես հնարավորություն ունենալ աշխատելու «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի հետ իր գործունեության երկրորդ տասնամյակի ընթացքում:

Մաղթում ենք ձեզ շարունակական հաջողություն ֆերմերների և գյուղական Հայաստանի բնակիչների վարկային պահանջները բավարարելու գործում:

Ջոն Փենսոն
Գյուղատնտեսության տնտեսագիտության ավագ պրոֆեսոր «Տեխասի A&M համալսարան»-ում
Լին Էքսթոն
«Exton & Partners Risk, Governance and Analytics»
ՍՊԸ-ի Գլխավոր գործընկեր

Ռոբերտ Ֆրեյզի

Հարգելի՛ Արմեն, խորհրդի անդամնե՛ր, ղեկավարությո՛ւն և աշխատակիցնե՛ր,

Շնորհավորում եմ ձեզ՝ Հայաստանի ֆերմերներին և գյուղաբնակ տնտեսվարողներին հաջողությամբ ծառայելու 10-ամյակի կապակցությամբ: Դուք մեծ քայլեր եք արել Հայաստանի գյուղական համայնքներում կյանքի որակի բարելավման ձեր առաքելությունն ու տեսլականն իրագործելու ուղղությամբ: Ձեր գործունեության արդյունքները ձեր կողմից ֆինանսավորվող ծրագրերում, ինչպես նաև ձեր կոոպերատիվի ընդհանուր ֆինանսական կատարողականը պարզ և հստակ վկայում են այդ առաքելության իրագործման գործում ձեր նվաճումների մասին:

Ես մեծ պատիվ ունեցա 10 տարի առաջ ներգրավվելու ձեր աշխատանքներում, երբ դուք հիմք էիք դնում և կառուցում էիք այն կազմակերպությունը, որի 10-ամյակը մենք այժմ տոնում ենք: Այս տոնակատարությանը մասնակցելու հրավեր ստանալը մեծ պատիվ է ինձ համար:

Թո՛ւյլ տվեք արտահայտել իմ ցանկությունն ու կանխատեսումը հաջորդ 10 տարիների համար: Հուսով եմ, որ երբ գա 20-ամյակը նշելու ժամանակը, դուք այսօրվա պես ցույց կտաք, որ բարգավաճող ֆինանսական կոոպերատիվ եք, որը սպասարկում է էլ ավելի մեծ թվով մարդկանց, վայելում է համընդհանուր ճանաչում՝ գյուղական Հայաստանի կյանքի որակը բարելավելու շնորհիվ, և դարձել է մի կառույց, որի օրինակով աշխարհի տարբեր անկյուններից այլ կազմակերպություններ կկարողանան ձևավորել իրենց գյուղատնտեսական զարգացումները:

Ընդունե՛ք իմ շնորհավորանքները պատվավոր անցյալի և լավագույն մաղթանքներն ապագայի համար:

Հարգանքով,
Ջ. Ռոբերտ Ֆրեյզի
«Terrapin Enterprise Strategies» ընկերության Նախագահ և Գործադիր տնօրեն
«MidAtlantic Farm Credit» ընկերության նախկին Նախագահ և Գլխավոր գործադիր տնօրեն

Դեսպան Մարի Լ. Յովանովիչ

Ինձ համար մեծ պատիվ է շնորհավորել «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ընկերությանը վերջինիս 10-ամյակի կապակցությամբ և ողջունել նրա ջանքերը, որոնք ուղղված են Հայաստանի գյուղական համայնքներում կյանքի որակի բարելավմանը: ԱՄՆ Գյուղդեպարտամենտը հպարտանում է «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի հիմնադրման գործում իր ունեցած ներդրմամբ, և ես ինքս էլ հպարտ եմ, որ մասնակից եմ եղել այս նախաձեռնությանը: Սա ԱՄՆ կառավարության և հայ ժողովրդի միջև հաջողված համագործակցության բազմաթիվ օրինակներից մեկն է. այս տարվա ընթացքում մենք տոնում ենք Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակը: ԱՄՆ կառավարության համագործակցությունը «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի հետ առաջխաղացման կարևոր քայլ էր ոչ միայն ֆինանսական, այլև գյուղատնտեսության ոլորտի համար: Յուրաքանչյուրը, ում Հայաստան այցելելու բախտ է վիճակվել, գիտի այն, ինչ գիտեմ ես. գյուղատնտեսությունը Հայաստանի գյուղական համայնքների համար տնտեսական աճի շարժիչ է համարվում: Այս ոլորտում ներառված է Հայաստանի աշխատուժի 40%-ը և ՀՆԱ-ի 20%-ը: Ուրախ եմ, որ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից «Համագործակցություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» և «Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն» ծրագրերին աջակցության միջոցով, Միացյալ Նահանգները շարունակում են նպաստել գյուղական տնտեսության զարգացմանը Հայաստանում խրախուսելով ձեռնարկատիրությունը և դյուրինացնելով ֆինանսական միջոցների հասանելիությունը: ԱՄՆ կառավարությունը մեծապես գնահատում է իր համագործակցությունը «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի հետ:

Դեսպան Մարի Լ. Յովանովիչ
Հայաստանում ԱՄՆ նախկին դեսպան (2008-2011թթ.)

ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մ. Միլս

Մեծագույն հաճույքով շնորհավորում եմ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ին իր տասնամյակի կապակցությամբ: Ամերիկյան կառավարության կողմից ԱՄՆ Գյուղդեպարտամենտի միջոցով ցուցաբերած աջակցությունը «Ֆարմ Կրեդիտ»-ին մեկն է այն հազարավոր համագործակցություններից, որոնք մենք այսօր տոնում ենք Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակին ընդառաջ: ԱՄՆ կառավարությունը շարունակում է համագործակցել Հայաստանի հետ՝ զարգացնելու գյուղատնտեսական սեկտորը՝ երկրի տնտեսության ամենակենսական և կարևոր ճյուղերից մեկը: Գյուղատնտեսության զարգացման աջակցության գործում ամերիկյան կառավարությունը տրամադրել է այն բոլոր հմտությունները, գիտելիքները և ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են եղել հայ գյուղատնտեսներին՝ ապահովելու բերք և սնունդ տեղի բնակչության համար, ինչպես նաև մրցունակ լինելու տեղական և տարածաշրջանային շուկաներում: Ես հպարտ եմ այն կարևոր դերով, որ ԱՄՆ-ն կատարել է աջակցելու «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ին և Հայաստանի գյուղատնտեսությանը:

Ռոբերտ Էնգել

Մեզանից ոմանք, ում հաջողվել է իրենց կյանքի մեծ մասն անցկացնել աշխարհի առավել զարգացած ժողովրդավար երկրներում, հաճախ մեղավոր են նրանում, որ ընդունում են մեզ բաժին ընկած առատությունն իբրև բնական շնորհ: Մենք մեղավոր ենք նաև նրանում, որ չենք հիշում ոչ այնքան վաղեմի անցյալը և մոռանում ենք, թե ինչպես ենք հասել ներկայիս իրավիճակին: Այսինքն, մենք դա կմոռանայինք, եթե մեզ բախտ չվիճակվեր տեսնելու, թե ինչպես է կրկնվում պատմությունը:

Իմ դեպքում, այդպիսի բախտի դերում հանդես եկավ այն գործընկերությունը և ընկերները, ում ես ձեռք բերեցի Խորհրդային Միության նախկին հանրապետություններից մեկում Հայաստանում: Այն ժամանակ Հայաստանը, որն աշխարհի ամենահին, ամենասուրբ և գեղեցիկ երկրներից մեկն է, դեռևս դեպի ինքնիշխան պետության անցում կատարելու ընթացքի մեջ էր, իսկ ապրուստի կայուն աղբյուր ունենալու կենսական կարիքը նման պետություն կառուցելու համար անհրաժեշտ հիմնաքարերից մեկն էր:

Բարեբախտաբար, Արմեն Գաբրիելյան անունով մի անձնավորություն և նրա գործընկերներն արագ հասկացան, որ այդ նպատակին հասնելու գրավականը հայ ֆերմերի աշխատանքային էթիկան, վճռականությունը և հնարամտությունը գործի դնելն է: Դրա համար, իր հերթին, պահանջվում էր ֆերմերների համար վարկավորման վստահելի աղբյուրի առկայություն թե՛ լավ, թե՛ ծանր ժամանակներում: Արմենը և նրա թիմը դիմեցին Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող «Ֆարմ Կրեդիտ համակարգ»-ին: Այդ կազմակերպությունն արդեն մոտ 100 տարեկան էր և սկսել էր ծառայել ֆերմերներին մի միջավայրում, որը շատ նման էր այդ ժամանակ Հայաստանում առկա իրավիճակին: «Ֆարմ Կրեդիտ»-ը ստանձնել էր մի առաքելություն, որը կոոպերատիվ սեփականության եղանակով համապատասխանեցնում էր ֆերմերների և նրանց վարկավորողների շահերը և որի դեպքում իրականացվում էր գիտելիքի ու հաջողված փորձի փոխանակում:

Հանդիսանալով այդ ժամանակ «Ֆարմ Կրեդիտ Համակարգի» կառույցի՝ «CoBank»-ի գործադիր տնօրենը, ես ոգևորություն զգացի՝ տեսնելով այն մեծ հանձնառությունը, առաքելության ոգին և հրատապության զգացումը, որը ցուցաբերում էին Արմենը և նրա թիմը: Դիմակայելով շատ ավելի լուրջ բարդություններին, քան մենք կարող էինք պատկերացնել այդ ժամանակ՝ 10 տարի առաջ ստեղծվեց «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ն, որը հիմնադրվեց այն կոոպերատիվ սկզբունքներով, որոնք ամբողջ աշխարհում դրսևորել են իրենց կայունությունը: Սկսնակ կազմակերպությունից մինչև հաջողակ կոոպերատիվ ֆինանսական հաստատություն տանող ճանապարհին «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի անդամ-փայատերերը և աշխատակիցներն ակտիվորեն պայքարում էին իրենց հանդիպած բազմաթիվ մարտահրավերների դեմ՝ իրականացնելով իրենց առաքելությունը: Որպես երկար տարիների միջազգային փորձ ունեցող բանկային ոլորտի մասնագետ, կարող եմ փաստել, որ ընդամենը 10 տարիների համար սա եզակի և հսկայական ձեռքբերում է:

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ն, Հայաստանի ֆերմերները և Հայաստանի ժողովուրդը դեռ հանդիպելու են մարտահրավերների՝ տանելով իրենց երկիրը դեպի ավելի պայծառ ապագա: Սակայն նրանք ունեն նաև հնարավորություններ. հնարավորություններ, որոնք ի վերջո բարելավելու են մարդկանց կյանքն ու հասարակությունը:

«CoBank»-ի, «Ֆարմ Կրեդիտ Համակարգ»-ի և անձամբ ինձ համար մեծ պատիվ և բավականություն է ականատես լինել «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի հաջողությանը: Կազմակերպության տասնամյակին բոլորիս անունից փոխանցում եմ մեր անկեղծ շնորհավորանքներն ու ամենաջերմ մաղթանքներն Արմենին, ընկերության անդամ-փայատերերին, թիմին և Հայաստանում բնակվող բոլոր հիանալի մարդկանց:

Ռոբերտ Էնգել
«CoBank»-ի նախկին Գլխավոր գործադիր տնօրեն և ավագ խորհրդական

Կոոպերատիվների միջազգային դաշինքի նախագահ Մոնիք Ֆ. Լերու

Հարգելի՛ պարոն նախագահ,

«Կոոպերատիվների միջազգային դաշինք»-ի (ICA) անունից ցանկանում եմ սրտանց շնորհավորել Ձեր կոոպերատիվին և նրա անդամներին՝ գործունեության 10 տարին հաջողությամբ ավարտելու համար:

Համագործակցելու պատրաստակամությունը եզակի և անփոխարինելի ներդրում է այն հասարակության հարստացման գործում, որտեղ մենք ապրում ենք: Ամբողջ աշխարհում կոոպերատիվի մոդելը կարևոր ներդրում է կատարում սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Կենսունակ և կայուն ձեռնարկություններ ստեղծելով՝ կոոպերատիվ շարժումն ապահովում է արդյունավետ աշխատատեղեր և ձևավորում է կայուն եկամուտ, ինչը նպաստում է աղքատության կրճատմանը: Բացի այդ, կոոպերատիվները, ելնելով իրենց արժեքներից և սկզբունքներից և կարևորելով իրենց տեղական համայնքների բարեկեցությունը, ամրապնդում են գյուղական տնտեսությունները և զգալի դրական ազդեցություն են թողնում հասարակության մնացած հատվածի վրա:

Կոոպերատիվ մոտեցման ուժը նրանում է, որ այն արտապատկերում է մարդկանց կյանքը, արժեքները, պարտավորությունները և ստեղծարար միտքը:

2007թ.-ին, երբ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ն հիմնադրվեց, նրա կազմում կային ընդամենը 57 ֆերմերներ: Տարիների ընթացքում կառույցին հաջողվեց աճել և զարգանալ, քանի որ այն հոգում է հայ ժողովրդի համար կենսական մի կարիք՝ տրամադրելով փոքր ձեռնարկատերերի պահանջներին համապատասխանեցված վարկեր: Այսօր կոոպերատիվն ունի ավելի քան 6 400 անդամ-փայատեր, ինչը իսկապես մեծ հաջողություն է Հայաստանի պայմաններում: «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի պատմությունը կոոպերատիվ շարժման ուժի արտացոլումն է:

Կոոպերատիվները էական փոփոխություններ են կատարում համայնքներում: Կոոպերատիվի առաքելության հիմքում ընկած է ոչ այնքան տնտեսական գործունեությունը, որքան այնպիսի լուծումներ գտնելը, որոնք կուղղորդեն համայնքներին իրենց նպատակների իրագործմանը: Դա հենց «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ի դեպքն է: Մենք պետք է շարունակենք ներկայացնել մեր պատմությունը կառավարության պաշտոնատար անձանց և տնտեսության ոլորտի առաջատարներին, որպեսզի նրանք խթանեն նոր կոոպերատիվների ստեղծումն ի շահ բոլորի: Մեր ներդրումը շատ կարևոր է համաշխարհային տնտեսության համար, քանի որ օգնում է հավասարակշռություն ստեղծել մասնավոր և պետական հատվածների միջև: Սակայն մեր ներդրումը կարող է էլ ավելի մեծանալ մեր համատեղ աշխատանքի շնորհիվ, որը մեզ կօգնի ավելի լավ աշխարհ ստեղծել ապագա սերունդների համար:

Կրկին ցանկանում եմ նշել, որ մեծապես ցավում եմ, որ չեմ կարող անձամբ Ձեզ հետ լինել. առաջին հերթին, քանի որ համոզված եմ, որ դա հիշարժան օր է լինելու, և երկրորդը՝ որովհետև, որոշակի իմաստով, դա նաև ամբողջ կոոպերատիվ համայնքի տոնն է, որն ամեն օր գործում է աշխարհը կատարելագործելու ուղղությամբ:

Խորին հարգանքով,
Մոնիք Ֆ. Լերու
Նախագահ

Մեր աշխատակիցների բարեմաղթանքները

Հրանտ Եղիազարյան
ԳԳՏ Տեղական / Վարկային տնօրեն

Անցած 10 տարիների ընթացքում մենք միասին անցել ենք մի ճանապարհ, որը կոչվում է «Ֆարմ Կրեդիտ վարկային կոոպերատիվի ստեղծում և կայացում»: Այդ ճանապարհը լի էր տարաբնույթ բարդություններով և խոչընդոտներով ու միևնույն ժամանակ շատ հետաքրքիր ու հիշարժան իրադարձություններով: Այն ամենը, ինչ մենք այսօր ունենք, ստեղծվել է մեր բոլորի քրտնաջան աշխատանքի արդյունքում:
Շնորհավորում եմ բոլորիս «Ֆարմ Կրեդիտ»-ի 10-ամյակի կապակցությամբ և թո՛ղ մենք լինենք այնքան ուժեղ և խելացի, որ կարողանանք շարունակել մեր գործը, այնքան ազնիվ և թափանցիկ, որպեսզի մեր շարքերը համալրվեն նորանոր անդամ-փայատերերով:

Մուշեղ Պետրոսյան
ԳԳՏ տեղական / Գործառնական տնօրեն

Ուրախ եմ, որ տասը տարի առաջ ես անդամակցում էի այն թիմին, որի ջանքերով և մեր անդամ-փայատերերի մասնակցությամբ հիմնադրվեց մեր վարկային կոոպերատիվը: Այս տարիները ապացուցեցին, որ այն գաղափարները և արժեքները, որոնք դրված են կազմակերպության գաղափարական հիմքում, կենսունակ են և պահանջված:
Սրտանց շնորհավորում եմ բոլորիս տասնամյա տարեդարձի առթիվ:

Շիրակ Բոյաջյան
«Էջմիածին» մասնաճյուղի կառավարիչ

Սրտանց շնորհավորում եմ բոլորիս մեր կազմակերպության տասնամյակի կապակցությամբ:
Այս տասը տարիների ընթացքում մենք հասել ենք բազում հաջողությունների: Համոզված եմ, որ այդ ամենը չէր լինի, եթե չլիներ կոոպերատիվի անդամ-փայատերերի հավատը մեր նկատմամբ:
Վստահ եմ, որ «Ֆարմ Կրեդիտ»-ի ապագան լինելու է լուսավոր, բարեկեցիկ, իսկ մեր ընտրած ուղին՝ հաղթական:
Այս նշանակալից տարելիցի կապակցությամբ ցանկանում եմ բոլորիս հավատ՝ մեր միասնական նպատակին հասնելու ճանապարհին:

Արսեն Լոբյան
«Արմավիր» մասնաճյուղի կառավարիչ

«Ֆարմ Կրեդիտ»-ը անցած 8 տարիների ընթացքում շատ գիտելիքներ է տվել ինձ. ես ինձ ավելի կայացած և ապահով եմ զգում իմ երկրում: Վստահ կարող եմ ասել, որ մեր կառույցը ստեղծված չէ միայն հաճախորդների ֆինանսական կարիքները բավարարելու համար: Մենք եզակի օրինակ ենք մեր երկրի ֆինանսական շուկայում և հասարակության համար մեր թափանցիկությամբ և աշխատանքին նվիրվածությամբ:
Սրտանց շնորհավորում եմ մեզ բոլորիս մեր կազմակերպության 10-րդ տարելիցի կապակցությամբ՝ մաղթելով ամրություն, բարգավաճում և նորանոր ձեռքբերումներ:

Արմեն Վարդանյան
Լիզինգի և հիփոթեքի բաժնի ղեկավար

Ազնվություն, անաչառություն, անհատական մոտեցում. մարդկային և գործնական այս բարձր արժեքների համադրությունն է գերիշխել «Ֆարմ Կրեդիտ»-ի նախորդ տասը տարիների աշխատանքային կենսագործունեության ընթացքում, ինչն էլ հնարավորություն է տվել յուրաքանչյուր աշխատակցի սիրել և կապվել կառույցի հետ: «Ֆարմ Կրեդիտ»-ին մաղթում եմ կանաչ և հարթ ճանապարհ դեպի գյուղական Հայաստանի բարդ ու խնդիրներով լի ֆինանսական աշխարհ:

ՀՀ, ք. Երևան 0018, Քաջազնունու 18
Հեռ՝. +37410 55 08 31
Ֆաքս՝ +37410 55 07 84
Էլ. հասցե: fca@fca.am
կայք: www.fca.am

Գրաֆիկական դիզայնը՝
Դավիթ Հակոբյանի
+374 41 060 760
dh.artstudio@yahoo.com